№ 262 ԿԻՐԱԿԻ, 27 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 27 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 262

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1912 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը՝ 85 կ. և 15 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միենոյն ժամանակ 40 կ. նամականիշ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով առեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակին հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, նոյեմբերի 28-ին
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ.
Որբախնամ Ընկերութեան օգտին
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
ՅՈ՛ՆԵՐԹԱՍ
Դրամա 6 գործ., Սենկևիչի ռօմանից փոխադրած, Թարգ. Լ. Բարայեանի
Մասնակցում են՝ տ. տ. Ադամեան, Գուլազեան, Զաբէլ, Խանդանեան, Մայսուրեան, Ցասմիկ, պ. պ. Աբէլեան, Ալիխանեան, Ալիխանեան II, Ադայեան, Աւետեան, Լաքա, Ղազարեան, Մանուէլեան, Միրզոյեան, Յարութիւնեան, Շահխաթունի, Սուսմեան և ուրիշներ։
Սկիզբն է երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։
Ռեժիսոր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Երկուշաբթի, դեկտեմբերի 5-ին ՏԻԿ. ՍԻՐԱՆՈՅՇԻ բենեֆիսն է։
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Գ. Կաֆեան, Ա. Նազարէթեան
1115. 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃ
Շաբաթ, դեկտեմբերի 3-ին, տեղի կունենայ ՏՕՄՍՕՆԻ աշակերտ
ՋՈՒԹԱԿԱՀԱՐ՝ ՎՐՈՅՐԻ
ՀԱՄԵՐԳԸ
Բարեհաճ մասնակցութեամբ տիկ. ՄԻՐԱՔԵԱՆԻ (երգ) և ներդաշնակութեամբ (аккомпаниментъ) տիկ. ՑԻՑԻԱՆՕՎԱՅԻ։ Տոմսակները վաճառվում են Սուլթանեանի խանութում (Երևանեան հրապարակ)։
Համերգի սկիզբը երեկոյեան ժամը $8^1/_2$-ին։
1118. 1—1

ԱՌԵՒՏՐԱ-ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐՇԱԿ ՆԱԶԱՐԵԱՆ ՄԻԼԵԱՆԸ
խնդրում է առևտրա-արդիւնաբերական ընտրողներին շնորհ բերել ԱՅՍՕՐ Թիֆլիսի քաղաքային դումայի ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ, որ տեղի կունենայ
ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 10-ԻՑ ՄԻՆՉԵՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 6-Ը
հետեւեալ տեղերում.
I ընտր. մասի համար—Քաղաքային Աշխատանքի Բօրսայում, Վերիյսկի զառիվայր։
II » » » —Քաղաքային դումայի դահլիճում։
III » » » —Հաւլաբարի կլուբում։
1114. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ընտրողներին, որ ԱՅՍՕՐ, կիրակի, նոյեմբերի 27-ին
կը կայանայ
ՁԱՅՆԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ
I ընտր. մասի համար տեղի կունենայ Քաղաք. Աշխատ. Բօրսայում (Վերիյսկի հր.։)
II » » » » » Քաղ. դում. դահլիճում (մուտքը Վելիամ. փ.-ից)։
III » » » » » Հաւլաբարի կլուբում (Կախէտինսկի հրապար.)։
Ընտրութիւնները կը սկսվեն առաւօտեան ժամը 10-ից և կը շարունակվեն մինչև երեկոյեան ժամը 6-ը։
1117. 1—1

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի
Սրսկումներ նաև տուբերկուլիններով:
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10. Տէլէֆօն № 792.
(ա.օ.) առ. 989. 100—39

ԲԺԻՇԿ
Գր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին եւ երեխայոց
հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանօվսկայա փողոց, տուն Սէյլանովների, № 18, տէլէֆօն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(և.հ.կ.) առ. 819. 100—34

ФАБРИКИ
А.ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
„ИНТЕЛЛИГЕНТНЫЯ"
ЦѢНА
25 шт. 15 к.
10 ш. 6 к. 100 ш. 60 к.
662. առ. 100—69



ПАПИРОСЫ
ЛЕВЪ
20 шт.
5 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА

ПАПИРОСЫ
ЭКСТРА
15 шт.
5 коп.
ФАБРИКИ
А.ЭНФІАДЖІАНЦА
(և. հ. կ.)

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ ջղային հիւանդութիւններ
Ընդունելութիւնը (ցերեկվայ ժամը 12—1.
ամեն օր (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կօչուբէեվսկայա փող. № 22. Ելիզավէտինսկայա փողոցից՝ № 44 տան [illegible]
(և.հ.կ.) առ. 243. 100—97

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԵՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին: Պլոմբ, արհեստական ատամներ իւրաքանչիւրը 1 ռուբլի, և այլն:
Աշակերտներին և ծառայողներին 50% զեղչ:
Ընդունելութիւնը առ. ժամը 9—2-ը և 4—7-ը երեկ.
Միքայէլեան փող. № 6, մուտքը պերէւլկայից:
(և.հ.կ.) առ. 876. 50—34

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՕՐ Է

Այսօր Թիֆլիսում ընտրութեան օր է։

Քաղաքացի ընտրողը պէտք է որոշի իր քաղաքային ինքնավարութեան ապագայ գործողների կազմը։

Այդ քուէները պէտք է համարվեն Թիֆլիսի ազգաբնակութեան կամքի և տրամադրութեան արտայայտութիւնը։

Ինչ կասեն մեզ այդ քուէները, մենք կը տեսնենք ընտրական գործողութիւնից յետոյ. բայց այսօր մենք ունենք մի բան ասելու քուէ տուողներին։

Տուէք ձեր քուէները այն թեկնածուներին, որոնք յիրաւի կարող են ներկայացնել ձեր իղձերը, արտայայտել ձեր կամքը, արդարացնել ձեր սպասելիքները։ Եւ երբ դուք բարեխիղճ կը լինէք քուէների վերաբերութեամբ՝ դուք արժանաւոր կերպով կատարած կը լինէք ձեր պարտականութիւնը ընտրութիւնների գործում։

Մենք նախորդ յօդուածներով ներկայացրինք մեր ընթերցողներին մի քանի խորհրդածութիւններ քաղաքային ինքնավարութեան ընթացիկ գործերի և հիմնական նպատակների մասին։

Թիֆլիս քաղաքը կարող է բարգաւաճել և կարող է զարգանալ—այդ անկասկած է։ Եւ այդ ասպարէզում քաղաքային ինքնավարութեանը վերապահված է մեծ նախաձեռնութիւն։

Քաղաքային ինքնավարութիւնը իր բոլոր օժանդակ մարմինների հետ միասին, ազգաբնակութեան բոլոր կենդանի կուլտուրական ույժերի գործակցութեամբ կարող է զգալի կերպով բարձրացնել քաղաքի կեանքի մակերևոյթը և զօրացնել նրա զարկերակը։

Բեղմնաւոր, ձեռնհաս գործունէութիւնը կը գրաւի մտաւոր և բարոյական աջակցութիւն, կը գրաւի գործօն դրամագլուխներ, կրթական և տնտեսական ձեռնարկութիւններ, որոնք իրանց միահամուռ գործակցութեամբ կեանք կը տան Թիֆլիսին թէ իբրև մի առսկ քաղաքի և թէ իբրև մեր երկրի մայրաքաղաքի։

Տուէք, ընտրողներ, ձեր քուէները արժանաւորներին, քաղաքի շահերը լայնարձակ իմաստով ըմբռնողներին, եռանդուն և գործունեայ անձնաւորութիւններին։

Ա. Քալանթար

ՄԻՆԻՍՏՐ ՍԱԶՕՆՕՎԸ ՊԱՐԻԶՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 նոյեմբերի

Պարիզ.—Մինիստր Սազօնով բացատրեց Գործակալութեան թղթակցին Ֆրանսիա գնալու նպատակների և հետեւանքների մասին։ Նպատակն էր՝ ծանօթանալ ֆրանսիական կառավարութեան ներկայացուցիչների հետ և մօքերի ընդհանուր փոխանակութիւն ունենալ այն հարցերի վերաբերմամբ, որոնցով հետաքրքրվում են երկու պետութիւնները։ Մինիստրը շատ երախտագէտ է ֆրանսիական կառավարութեանը սիրալիր ընդունելութեան համար և յայտարարում է, որ մօքերի փոխանակութիւնը ապացուցեց Ռուսաստանի և Ֆրանսիայի կատարեալ համերաշխութիւնը արտաքին քաղաքականութեան բոլոր հարցերի վերաբերմամբ և ֆրանս-ռուսական դաշնակցութեան ամրութիւնը և կենսունակութիւնը։ «Ես հնարաւորութիւն չունեմ Թագաւորի մեկնելու պատճառով այցելել այժմ Անգլիա»։ Սազօնովը տեսակցութիւն ունեցաւ կոմս Բենկենդօրֆի և անգլիական դեսպանի հետ։ Ճիշդ չէ այն լուրը, որ երբ թէ մօքերի փոխանակութեան ժամանակ ֆրանսիական կառավարութեան հետ՝ ներկայ են եղել երրորդ անձինք, ի միջի այլոց, ռուսաց զինուորական վարչութեան մի քանի ներկայացուցիչներ։ Հակառակ մամուլի մէջ երևցած տեղեկութիւնների՝ Սազօնովի գալուստը կապ չունի Ջրանցքների և Պարսկաստանի վերաբերեալ հարցերի քննութեան հետ։ Մամուլը ի զուր չափազանցրած նշանակութիւն է տալիս Ջրանցքներին վերաբերեալ հարցին, իսկ Պարսկաստանին ուղարկած ուլտիմատումը նպատակ ունի արժանաւոր կերպով պատասխանել քաղաքական տակտից զուրկ և դրութեան պարզ հասկացողութիւն չունեցող պարսիկ մի խումբ գործիչների Ռուսաստանի համար անթոյլատրելի գործողութիւններին։ Սակայն Ռուսաստանը նպատակ չունի իր երկրի անպէտք լայնացումը։ «Տան» լրագրի աշխատակցի հետ խօսակցութեան ժամանակ Սազօնովը յայտնեց, որ ինքն ոչ առանց զարմանքի կարդում է լրագիրներում Ռուսաստանին վերագրվող դիտաւորութիւնը՝ հերթական դարձնել Ջրանցքների հարցը, նոյնպէս այն տեղեկութիւնը, որ իբր թէ Ռուսաստանը պահանջել է Թիւրքիայից ռուսական նաւերի ազատ անցնումը։ Այդ բանի վերաբերմամբ ոչ մի պաշտօնական բանակցութիւն տեղի չէ ունեցած, այլ միայն մօքերի հասարակ փոխանակութիւն է եղել, այն երկիւղից, որ չը լինի թէ Թիւրքիան Դարդանէլի ականային արգելքներով վընաս հասցնի առևտրին։ Սազօնովը հաստատեց Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի և Եապօնիայի քաղաքականութեան չափաւորութիւնը և հայեացքների լիակատար միութիւնը չինական գործերի վերաբերմամբ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 նոյեմբերի

Լօնդօն.—Պալատ։ Կէրզօնը պարսկական գործերի առիթով արտասանած ճառի մէջ ընդունեց, որ անգլօ-ռուսական համաձայնութիւնը նպաստաւոր ազդեցութիւն գործեց Ասիայում խաղաղութիւնը հաստատելու, Հնդկաստանը անվտանգ դարձնելու և անգլօ-ռուսական յարաբերութիւնները բարելաւելու վրա, բայց չը համաձայնեց Մօրլէյի հետ, թէ 1907 թ. համաձայնութեան մի մասը՝ վերաբերեալ Պարսկաստանին՝ անհամեմատ կատարեալն է. ընդհակառակը, նա կարծում է, որ դա վատթար մասն է, վասնզի այդ համաձայնութիւնը միակողմանի երևաց Պարսկաստանում բրիտանական շահերի վրա ազդելու գործում. Պարսկաստանի դրութիւնը ներկայումս անասելի վատթար է, քան մինչև համաձայնութիւնը կապելն էր։ Կէրզօնը վկայում է, որ համաձայնութիւնը չը կանգնեցրեց Պարսկաստանի անկումը. այժմ երկիւղ կայ, որ համաձայնութեան քօղի տակ կը կատարվի հէնց այն դէպքը, որի մեկուսացման համար գլխաւորապէս կապվեց համաձայնութիւնը։ Ռուսաստանի երկրորդ ուլտիմատումը Կէրզօնը համարում է չափազանց կըտրուկ ու շտապ և կարծում է, որ Անգլիան չէ կարող լուանալ իր ձեռքերը, որովհետև անգլիական կառավարութիւնը յանձն է առել Ռուսաստանի հետ միասին ընդհանուր պատասխանատուութիւն ուլտիմատումի համար։ Կէրզօնը յորդորում է կառավարութեանը՝ գործադրել իր ամբողջ պրեստիժը, ամբողջ իշխանութիւնն ու այն անհագին ազդեցութիւնը, որը Մեծ Բրիտանիան վայելում է Ասիայում, ոչ թէ պարսկական անկախութեան հոգիւ առկայծող բոցը հանգցնելու, այլ նրան վերստին վառելու համար (ծափահարութիւն)։

Մօրլէյը ասաց, որ կառավարութիւնը մտածում է պարսիկ ժողովրդի բարեկեցութեան ու պարսկական կառավարութեան կայունութեան մասին. Պարսկաստանի դժուարութիւնները արգասիք չեն անգլօ-ռուսական համաձայնութեան, այլ հանգամանքների. Շուստէրի գործողութիւններից առաջ եկած դժուարութիւնները հանդիսանում են ոչ միայն բարդութիւններ Ռուսաստանի հետ և յարուցանում են ոչ միայն Ռուսաստանի դըժգոհութիւնը, այլ և դժուարութիւններ, շաղկապված պարսից պարլամենտի գործունէութեան բնաւորութեան հետ։ Այդ չարիքը հետևանք չէ Ռուսաստանի գործողութիւնների։ Այնուհետև Մօրլէյը յոյս յայտնեց, թէ հէնց որ ճգնաժամը վերջանայ, Ռուսաստանը միջոց կը գտնէ լուծելու նոր ծագող դժուարութիւնները։ Ինչ տեսակ էլ որ լինեն դաւերը, որոնք գուցէ տեղի են ունենում նախկին շահի և ռուսաց կառավարութեան երկրորդական գործակալների միջև, նրանք յամենայն դէպս չեն ազդի ռուսաց կառավարութեան ցանկութեան ու մտադրութեան վրա՝ չը պաշտպանել նախկին շահին, եթէ նա փորձէ վերադառնալ։ Իսկ անգլիական կառավարութիւնը տեղեկացրեց ռուսաց կառավարութեան, թէ Անգլիան և ոչ մի հանգամանքով անկարող է ճանաչել նախկին շահին։ Շօշափելով Շուստէրի գործերը, Մօրլէյն ասաց, որ Շուստէրի ընդունակութիւնները և նրա բարի մտադրութիւնները վեճից դուրս են, սակայն նա ցոյց չը տուեց պահանջվող տակտը և անտես առաւ դրութիւնն ու Պարսկաստանի երկու մեծ հարևանների անքակտելի իրաւունքները։ Ապա բերելով «Թայմսի» մէջ տպված Շուստէրի նամակի մանրամասնութիւնները, Մօրլէյը նկատեց, թէ չէ կարելի ժխտել, որ Ռուսաստանը լուրջ հիմունքներ ունէր գանգատի համար, տեսնելով որ Պարսկաստանում նշանակված պաշտօնական անձը ընդարձակ չափով զրպարտութիւններ է տարածում Ռուսաստանի մասին, մի կառավարութեան պաշտօնեայն հանում է միւս կառավարութեան պաշտօնեայի դէմ։ Գրէյը նախազգուշացրեց Շուստէրին հետևանքների մասին։ «Անգլիական քաղաքականութեան հիմնական, սկզբունք—շարունակեց Մօրլէյ,—հանդիսանում է անգլօ-ռուսական համաձայնութեան ոգու տառացի պահպանումը. ապա Անգլիան չը պէտք է առիթը բաց թողնէ խորհրդով ու բարեացակամ միջնորդութեամբ դիւրացնելու պարսից կառավարութեան դրութիւնը. վերջապէս եթէ հնարաւորութիւն կայ՝ օգնել վերջինիս օրինական միջոցներով կատարելու իր ֆինանսական պարտականութիւնները, այն ժամանակ Անգլիան չը պէտք է դրան որևէ անհիմն խոչընդոտ առաջացնէ» (ծափահարութիւն)։

Կէրզօնը յայտնեց, որ Մօրլէյի բացատրութիւնները վերջնական են, պարզ ու, ընդհանուր առմամբ, սփոփիչ։

Լրագիրները քննում են պարսկական ճգնաժամը։ Ընդհանուրի կարծիքն այն է, որ Շուստէրը համակված էր բարի դիտաւորութիւններով, սակայն անտակտ էր ու պէտք է հեռանար։

—

Օդեսսա.—Նաւագնացութեան ու առևտրի ռուսական ընկերութիւնը հեռագիր ստացաւ «Տիգրիս» շոգենաւի կապիտանից, պարսկական Բուշիր նաւահանգստից, թէ պարսիկ նաւորդները հրաժարվեցին մօտենալ շոգենաւին ու ցոյց տալ պահանջվող ծառայութիւնները։

Սպահան.— Տրամադրութիւնը յուզալի է։ Տարածվում են հակառուսական թռուցիկներ։ Պրօպագանդա է մղվում բոյկոտ յայտարարել ռուսական ապրանքներին։ Անգլիական հիւպատոսարանի պահակախումբը ուժեղացվեց։ Սպահան գալու ժամանակ պահակախումբը ընդհարվել է աւազակների հետ։

Ուրմիա.—Սալմաստի գիւղերի բնակիչների հազարաւոր ամբոխը եկաւ Դիլման քաղաքը և քարուքանդ անելու սպառնալիքով պարսից նահանգապետից պահանջեց ապահովել քիւրդական աւազակութիւններից։ Ուրմիայի նահանգապետի հանգստացուցիչ խոստումներին ամբոխը վերաբերվեց անվստահօրէն և սպառնում է դիմել Ռուսաստանի հովանաւորութեան, եթէ կողոպուտները չը վերջանան։

Անջումանում դասային ներկայացուցիչների մասնակցութեամբ քննվեց ստեղծված արդի կացութիւնը։ Որոշվեց հնարաւոր արիւնհեղութիւնների առաջն առնելու համար պատգամաւորութիւն ուղարկել Թիւրքաց հիւպատոսի մօտ պահանջելու անմիջապէս դադարեցնել քիւրդերի ասպատակութիւնները, որոնք կարող են պարսիկներին դրդել դիմել Ռուսաստանի օգնութեան։

Խօյի և Ուրմիայի Թիւրքաց հիւպատոսները շտապով մեկնեցին Սալմաստ, որպէսզի ազդեն քիւրդերի և պարսիկ ազգաբնակութեան վրա և խափանեն ռուսական միջամտութիւնը։

Վերջին շաբաթվայ ընթացքում Սալմաստի վիճակում, Խօյի և Սալմաստի ճանապարհին քիւրդերը կողոպտել են աւելի քան 20 գիւղ, սպանել են մի քանի գիւղացիների և պարսիկ ձիաւորների, կողոպտել են պարսկահպատակների և ռուսահպատակների կարաւանները։

Խնդելիի վիճակում նոյնպէս համատարած կողոպուտներ են քիւրդերի ձեռքով։

Թաւրիզ.— Ֆէդայիները շտապով ամրացնում են միջնաբերդը։ Անջումանը հաւաստացնում է, որ, համաձայն Թեհրանից ստացված հեռագրերի, անհրաժեշտ է եռանդուն դիմադրութիւն ցոյց տալ Թաւրիզում, որպէսզի ռուսները պակասեցնեն կամ անգամ հրաժարվեն իրանց պահանջներից։ Ֆէդայիները փութանակի ստորագրութիւններ են ժողովում խաղաղ ազգաբնակութեան մէջ այն հեռագրի համար, որ ուղարկվելու է սուլթանին խնդրելով զօրքեր ուղարկել Թաւրիզ։

Ռուսաց զօրամասը եկաւ Խօյ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 նոյեմբերի

Պետերբուրգ.—Վերադարձաւ Ղրիմից զինուորական մինիստրը։

Անդրամուրեան երկաթուղային բրիգադայի պետ գեներալ-մայօր բարօն ֆօն-դէր-Րօօպը նշանակվում է անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ։

Պարիզ.—Արտաքին գործերի մինիստր դէ-Սէլվը կնոջ հետ ի պատիւ Սազօնովի ճաշ տուեց։ Ներկայ էին Իզվօլսկին, դեսպանատան պաշտօնեաները, դեսպանները և մինիստրները։

Սազօնովը այցելեց դէ-Սէլվին, յետոյ մինիստր-նախագահ Կայյօին։

Սազօնովը Պետերբուրգ կը մեկնէ չորեքշաբթի օրը։

Կիէվ.—Զինուորա-նահանգական դատարանում, դռնփակ, սկսվեց այն 8 անձանց գործի քննութիւնը, որոնց մէջ են Լվովի անտառային դպրոցի 4 ուսանողներ, որոնք մեղադրվում են Աւստրիային սահմանակից Ռուսաստանի մասի յատակագծերը Աւստրիային յանձնելու մէջ։

Լօնդօն.—Գերմանական բէյխստագի սօցիալ-դեմօկրատական ֆրակցիայի անդամներին ուղարկվեց բանուորական կուսակցութեան բոլոր անդամներից ստորագրված մի հաղորդագրութիւն, որով խնդրվում է յայտնել ազգաբնակութեան բոլոր դասակարգերին բրիտանական բանուոր դասակարգի բարեկամութեան հաւաստիքը։ Հաղորդագրութեան մէջ ցանկութիւն է յայտնած, թէ երկու կողմերը կապրեն խաղաղութեան մէջ և թէ վէճերը կը լուծվի միջնորդ դատարանով։

Հէլսինգֆորս.—Բարձրագոյն արգելվեց պաշտօնապէս տօնել վըբօրգեան նահանգը Ֆինլանդիային միացնելու հարիւրամեայ յօբելեանը։

Պորտ-Սաիդ.—Իտալական «Ապուլիա» յածանաւը թնդանօթ պարպելով կանգնեցրեց Կարմիր ծովում անգլիական «Պօլվօրա» շոգենաւը։

Բեռլին. — Հրատարակվեց հրաման բէյխստագը արձակելու մասին։

Կ. Պօլիս.—Զինուորական մինիստրութիւնը Տրիպօլիսի Թիւրքաց զօրքերի հրամանատարից հեռագիր ստացաւ, թէ նոյեմբերի 21-ին կատաղի կռւից յետոյ Թիւրքերը յետ նահանջեցին և գրաւեցին նախկին դիրքերը։

Բ. Դուռը պատուիրագրեց իր դեսպաններին պնդել մեծ պետութիւնների առաջ պահպանելու Պարսկաստանի անկախութիւնը։

Բ. Դրանը հաղորդում են, որ զօրաժողովներ են կատարվում Բօլգարիայում և Չեռնօգօրիայում։

Մեդուա բերդի մօտ երևացին իտալական երեք պատերազմանաւ։

Փակվեց «Լիբերալ Դաշնակցութիւն» կուսակցութեան օրգան «Ալեմդար» լրագիրը։

Մադրիդ.—Համաձայն Կանալեխասի յայտարարութեան, ֆրանսիական դեսպանի և սպանական արտաքին գործերի մինիստրի բանակցութիւնների ժամանակ ներկայ էր անգլիական դեսպանը։

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Ուստր, 1/14 նոյեմբերի

Թերթերից իմացաք անշուշտ, թէ առաջիկայ կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու իրաւունք տրված է Ամերիկայի և Եւրոպայի առաջնորդական թեմերին։ Այս մասին հրահանգ տրված լինելով Ամերիկայի առաջնորդութեանը՝ ընտրել պատգամաւորներ, կիրակի, նոյեմբերի 12-ին, այստեղ, որպէս առաջնորդանիստ քաղաք, գումարվեց ամերիկահայոց երեսփոխանական ժողովը բոլոր թեմերի հաճութեամբ ու մասնակցութեամբ, և նախագահութեամբ Պօղոս վ. Շահ-Նազարեանի (Թեմակալ հովիւ Վէստ Հօբօքնի) կաթողիկոսական պատգամաւորների ընտրութիւն կատարվեց։ Ժողովը եկեղեցական պատգամաւոր ընտրեց Էջմիածնի կաթողիկոսական տեղակալ Սուրէնեան արքեպիսկոպոսին, և աշխարհական պատգամաւոր՝ Մաղաք Գ. Պէրպէրեանին։

Այս ժողովի կողմից հեռագրվեց երէկ Էջմիածին։

Բայց Գաֆթճեան վարդապետ իր՝ որպէս թէ փոխանորդութեան հանգամանքովը (որ պաշտօնապէս դադարած է այդ պաշտօնից ազգ. կենտր. վարչութեան կողմից ու այս մասին քանի քանի անգամ գրված է Էջմիածին, որ նոյեմ. 12-ի երեսփոխ. ժողովն էլ վարչութեան որոշումը հաստատեց և առժամեայ առաջնորդական տեղապահ ընտրեց Շահ-Նազարեան վարդապետին) նախ «ընտրութիւնը երեսփ. ժողովին չի պատկանում» ասաց ու խնդիրը ժողովին ձգել մերժեց. երկրորդ՝ նոր նոր ապօրինի ընտրութիւններ անել է տալիս գաղութների մէջ, որոնց մասնակցել մերժում են թեմերի բոլոր պատգամ. հոգաբարձութիւններն էլ, առարկելով թէ՝ «Գաֆթճեանի փոխանորդութիւնը չենք ճանաչում, պատգամաւորների ընտրութեան իրաւասութիւնը պատկանում է միմիայն երեսփոխանական ժողովին, ինչպէս ընդունված օրէնք է թէ Պօլսում և թէ Թիւրքահայ բոլոր վիճակներում»։

Գաֆթճեան ճարահատ հոգաբարձութեանց տուած այս մերժողական պատասխանից՝ դաշնակցականների գիրկն ընկած է, որ ապօրինի ժողովներ չէ գումարել, ներկայացուցիչներ ընտրելու, որպէսզի ներկայացուցչական ժողովի մէջ ընտրեն կաթողիկոսական պատգամաւոր։

Ես, որպէս երեսփ. ժողովի կողմից օրինաւորապէս ընտրված աշխարհական պատգամաւոր, ամսոյս վերջերը պիտի մեկնեմ Ամերիկայից, եթէ դէմս չնախատեսված արգելքներ չը լինեն։

Մաղաք Պէրպէրեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ԶԳՕՆՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՂԱԴՐՎԱԾ

«Ո՞ւր ես Թագւոր, արդարութեան արեգակ», կանչում է «Հորիզոնի» էջերից Մեսրոպ ա.-ք. Մելեան*)։

Եւ արեգակը ծածկված է ամպերի թանձրութեան մէջ։ Կոյրերը խարխափում են խաւարում և որոնում։ Նրանք որոնում են մի կաթողիկոսացու, որ ճրագը վառէ Լուսաւորչի տան մէջ, և—ով աղէտ—իրանց ձեռքը դրել են Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի վրա, որը, խոստովանելուց յետ, թէ «Նուիրապետական ամեն աստիճանէ կամ ամեն դասակարգէ եղող պետեր կամ առաջնորդներ իրենց պաշտօնը կը վարեն կրօնական կամ հոգևորական և քաղաքական կամ աշխարհական ժողովներու կամ խորհուրդներու աջակցութեամբ», շարունակում է և աւելացնում. «Անոնք են որ ժողովական որոշմանց գործադրիչ իշխանութիւնը կը վարեն իբր իշխանութիւն և ոչ իբր պարզ պաշտօնեայ, և պահանջին համեմատ ընդհանուր կանոնները և որոշումները կը պատշաճեցնեն, և հարկաւոր ու կարեւոր պարագաներու մէջ կրնան ալ անձնական զգօնութեան իշխանութեամբ գործել»։

Ահա այստեղ է որ կացինն առնում է քարին, և Մելեան արժանապատիւ ա.-ք-ն բացագանչում է.

— Այլ ես ծեր մնացին «հայերն ու իրանց իրաւունքները»։ Այլ ես ծեր մնաց սրբազան Օրմանեանի «բուն ժողովրդական իրաւունքների ամենաեռանդուն պաշտպանութիւնը»։

Եւ նա հրաւիրում է ընթերցողներին մտածելու և դատելու։

Մտածողներից մէկն էլ ես, ես մտածում եմ և այսպէս դատում.

Օրմանեան իր գիրքը—«Հայոց եկեղեցին»—իբրև քննադատութիւն չէ գրել, այլ պարզօրէն հանդիսացրել է հայոց եկեղեցին այնպէս՝ որպէս նա եղել է և կայ։ Իսկ իբրև անձնական դատողութիւն, նա միայն ամենայն կերպ իր ջերմ համակրութիւնն է երեւցնում հայոց եկեղեցու մէջ տիրող սկզբունքներին։

Ծանօթացնելով օտարներին—եւրոպացիներին և հանուր աշխարհին—հայոց եկեղեցին, որպէս որ սա եղել է ու կայ, Օրմանեան պարզ մի ցուցադրող է եղել։ Ինչ որ Օրմանեանից կայ այդ ցուցադրութեան մէջ, այդ նրա քաջարուեստ հմտութիւնն է ցուցադրված առարկային. և ցուցադրութեան կերպից պարզ երեւում է նրա կատարեալ համակրութիւնը իր առարկային, և աւելի ոչինչ։

Հայոց եկեղեցին ինքն իր մէջ քննադատված չէ Օրմանեանի գրչի տակ. բայց նա, այո՛, բաղդատված է, ըստ հարկին և ըստ տեղւոյն, միւս եկեղեցիների հետ՝ և ջատագովված։

Օրմանեան ասում է (ակնարկս խնդրոյ առարկայ արված վերոյիշեալ հատուածի մասին է), թէ հայ եկեղեցու մէջ այդպէս է։ Թող Մելեան հաստատէ, թէ այդպէս չէ. և, եթէ ունի փաստ, թող ցոյց տայ, թէ իսկն ինչպէս է, և թէ Օրմանեան սխալ է հանդիսացնում հայ եկեղեցու վարչականի մասին այդ կէտը։ Նա թող ջանայ ապացուցանել, թէ այդ սխալն էլ ոչ թէ իսկականը ծուռ ըմռնելուցն է, այլ թէ Օրմանեան թաքուն դիտաւորութեամբ է աւելել այդ. այսինքն՝ իբր թէ նրանում բնաւորված միահեծանական ուղղութեան բերմունքն է մղել նրա գրչի տակ այդպիսի արտայայտութիւնը։ Եւ ուրեմն՝ որ նա, եթէ կաթողիկոսական իշխանութեան հասնի, միահեծանութիւն պիտի անէ, ոտի տակ տալով եկեղեցին, կամ, այլապէս ասած, ժողովական կամքն ու ժողովուրդը։

Մենք «անձնական զգօնութեան իշխանութիւն» կոչվածից, որ մանաւանդ հարկաւոր ու կարևոր պարագաները պարտադրում են, երկիւղ պիտի չունենանք։ Այդ զգօնութեան իշխանութեամբ վարվել են Գրիգոր Լուսաւորչից մինչև Սահակ հայրապետ. Սահակ հայրապետից մինչև Շնորհալի Ներսէս. Շնորհալի Ներսէսից մինչև Աշտարակեցին և Աշտարակեցուց մինչև վերջին Մատթէոս Երկրորդ։ Եւ եղկելի է այն հայրապետը, որ կարևոր պարագաներում այդպիսի զգօնութիւնից թափուր է գտնվում. և վայ այն ժողովրդին, որ իր գործերի և, կասեմ, կեանքի ուղղութեան ղեկը մի այնպիսի հայրապետի է վստահում, որ այդ առաքինութիւնը և քաղաքացիական արիութեան այդ յատկութիւնը չունի, «և է իբրև եղէգն շարժուն յամենայն հողմոյ»։

Ասացէք, խնդրեմ, ո՞ր օրէնքն է որ արգելում է իր գործադրողին՝ հարկաւոր ու կարեւոր պարագաներում վարվել անձնական զգօնութեան իշխանութեամբ։

Ասացէք նաև՝ ո՞ր գործադիր իշխանութիւնն է, որ իր պաշտօնավարութեան համար գծված սահմաններում չի նկատվում իբրև իշխանութիւն, այլ միայն իբրև մի պարզ պաշտօնեայ, որի համար հարկաւոր ու կարեւոր պարագաներ գոյութիւն չունեն. որ նկատվում է իբրև մի պարզ մեքենայ, որ իշխանութիւն չունի, կարևոր ու հարկաւոր պարագաներում, գծված ճանապարհից աջ կամ ահեակ խոտորվելու։

Միտս է գալիս հանգուցեալ գործիչներից մէկի ինձ պատմածը։

«Պաշտօնական գործով,—ասում էր նա,—Շուշի էի գնում. հետս կօզակ ունէի. մենք ձիով էինք։ Թղթապանս, ուր կարևոր գրեր ունէի, յանձնեցի կօզակին իր թևի տակ պահելու և պատուիրեցի՝ թէ ինչպէս տանի, այնպէս էլ յետ կը պահանջեմ։

«Ճանապարհին անձրև բռնվեցինք։ Տեղ հասած, կօզակն ինձ ներկայացրեց թղթապանս թևի տակ. բայց սա՝ կարգին թրջված էր։ Կօզակն իմ պատուէրը այդպէս էր կատարել։ Թևի տակն էի դրել, թևի տակն էլ պահել էր»։

Ահա մի պաշտօնեայ, որ կարծել է, թէ կարևոր ու հարկաւոր պարագայում անգամ, անձնական զգօնութեան իշխանութիւնը օրէնքից դուրս է։

Ա. Մ. Եզեկեան

---

*) «Հորիզոն» № 254.

ՄԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Ընթերցողները հաւանօրէն յիշում են, որ Հայ Դրամատիկ Ընկերութեան վերջերս տեղի ունեցած ընդհանուր ժողովում, համաձայն Ա. Քալանթարի առաջարկութեան։ որոշվեց հրաւիրել հայ թատերական գործին ծանօթ և նախանձախնդիր անձնաւորութիւններից մի համագումար ի յիշատակ Թիֆլիսի Հայ Դրամատիկական Ընկերութեան 10-ամեայ գոյութեան։

Յիշեալ Ընկերութեան վարչութիւնը, հիմնվելով անդամական ընդհանուր ժողովի որոշման վրայ նոյեմբերի 25-ին, Ընկերութեան գրասենեակում, երեկոյեան 5 ժամին հրաւիրել էր մի քանի հասարակական և գրական գործիչների ու դերասան-դերասանուհիների, այդ առիթով խորհրդակցելու համար։

Վարչութեան նախագահ Տիգրան Յովհաննիսեանը, բանալով ժողովը, առաջարկեց մտքերի փոխանակութիւն ունենալ։

Մ. Ջաքար այն մտքին է յայտնում, թէ ծրագրվելիք համագումարի հրաւիրումը միանգամայն աւելորդ է, որովհետև գաւառները չեն կարող տալ այնպիսի անձինք, որոնք կարողանային համագումարին ներկայացնել նորանոր հարցեր։ Բաւուք է գտնում Թիֆլիսի Հայ Դրամատիկական Ընկերութիւնը Կովկասահայ Դրամատիկական Ընկերութեան վերածելու մասին հոգալ և գաւառներում ճիւղեր բանալ, երբ արդէն կարելի կը լինի Ընկերութեան բոլոր ճիւղերի ներկայացուցիչներին ի մի համախմբել և նրանց կարծիքների հետ ծանօթանալ ու ըստ այնմ թատրոնական գործի բարւոքման նկատմամբ գործի ձեռնարկել։

Շիրվանզադէն նոյնպէս դէմ է համագումար հրաւիրելու մտադրութեանը։ Սա նոյն իսկ կապկութիւն է համարում այն ձգտումը, որ մենք հայերս ուզում ենք նմանվել մեծ ազգերին։ Նշտում է, որ մենք՝ հայերս սեփական թատրոն իսկ չունենք։

Ա. Քալանթար պաշտպանելով համագումար հրաւիրելու խնդիրը ապացուցանում է, որ էական խնդիրներ են առաջ եկել, որոնք կարօտ են խորհրդակցութեան և քննութեան։ Թատրոն, ռեպերտուար և դերասան—ահա երեք կէտեր, որոնց շուրջը պէտք է պտտին համագումարի քննութիւնները։ Թատրոնը իր կազմութեամբ գլխաւոր և գաւառական քաղաքներում յաճախ առիթներ է ընծայել բազմատեսակ քննադատութիւնների և առաջարկների։ Ռեպերտուարի կարևոր հարցը մշտապէս եղել է բազմատեսակ քննադատութիւնների առարկայ։ Ռեպերտուարի կազմութիւնը և որակը, ինքնուրոյն և թարգմանական պիէսների ներկայացման հարցը, պատմական կլասիք և ժամանակակից թեմաների մշակութիւնը բաժանել են մարդկանց մտքերը և կարօտ են լուսաբանութեան։ Այնուհետև դերասանական պատրաստութեան, դերասանական խմբերի կազմակերպութեան, դերասանական ապահովութեան, ռէժիսեօրական ձեռնհասութեան խնդիրները կարող են կարևոր առարկաներ լինել համագումարի քննութեան համար։ Անշուշտ, համագումարը հանդէս կը բերի խնդիր թատրոնական մատենադարանի, թատրոնական գրականութեան խնդիրներ և հող կը պատրաստի թատրոնական ֆօնդի և Դրամատիկական Ընկերութեան կանոնադրութեան մի քանի կէտերի բարեփոխութեան համար։ Վերջապէս համագումարը ինքը հանդէս կը բերի նոր խնդիրներ ապագայ քննութիւնների համար։

Ցար. Գասպարեան յիշեցնում է ժողովականներին, որ հայերս գաւառներում ունենք մի շարք գրական և հասարակական գործիչներ, որոնք ծանօթ լինելով գաւառական թատրօնի կարիքների հետ, համագումարին գալով կը կարողանան ծանօթացնել գաւառների թատրօնական կարիքների հետ։ Եթէ եղակի ընդունենք նոյնիսկ, որ Թիֆլիսի Հայ Դրամատիկական Ընկերութիւնը նախաձեռնում է գաւառներում ճիւղաւորութիւններ հիմնելու գործին, հէնց այդ իսկ տեսակէտից անհրաժեշտ է նախ և առաջ մտքերի փոխանակութիւն առաջ բերել և ըստ այնմ այդ գործին ձեռնարկել։

Սեւումեան նոյնպէս անհրաժեշտ է գտնում համագումարի հրաւիրումը, յիշելով իր կողմից մի երկու հարց, որոնց նկատմամբ կարևոր է խորհրդակցել։

Հ. Առաքելեան աւելորդ է համարում թեր և դէմ առարկութիւնները, քանի որ ընդհանուր ժողովում գրական որոշում կայացվել է համագումար հրաւիրելու վերաբերմամբ։

Նախագահը համամիտ լինելով Հ. Առաքելեանի ասածներին՝ այնուամենայնիւ ասում է, որ ներկայ ժողովը ցանկալի է,

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

(Մարգարիտա Օդուի նոր պատմուածքներից)

Գիւղում մի քանի օր անց կացնելուց յետոյ ես վերադառնում էի Պարիզ։ Երբ հասայ կայարան, գնացքը լիքն էր արդէն մարդկանցով։ Սկսեցի ման գալ վագոնները՝ ազատ տեղ գտնելու յոյսով, վերջապէս վագոններից մէկում ես գտայ մի տեղ, որ բռնված էր երկու խոշոր զամբիւղներով, որոնց միջից դուրս էին նայում հաւերի և բադերի գլուխները։

Մի քիչ տատանվելուց յետոյ ես բարձրացայ այդ վագոնը։ Գիւղացին, որ զամբիւղների տէրն էր և շապիկ ունէր հագած, յօժարութեամբ սկսեց տեղ բաց անել ինձ համար։

— Սպասեցէք, օրիորդ, ես իսկոյն կը տեղափոխեմ սրանք այստեղից։

Նրան օգնելու համար՝ ես վերցրի մրգեղէնով լի զամբիւղը, որ նրա գոգումն էր դրված. իսկ նա վերցրեց մեծ զամբիւղները, որոնց մէջ հաւեր և բադեր կային, և տեղաւորեց նստարանի տակ։

Բադերը սկսեցին բարձրաձայն բողոքել այն բանի դէմ, որ իրանց այդքան անհոգ կերպով անհանգստացրին, իսկ հաւերը կախեցին իրանց գլուխները՝ վիրաւորված զգալով իրանց արժանապատւութիւնը։

Գիւղացու կինը սկսեց հանգստացնել նրանց զանազան սիրալիր խօսքեր ասելով։ Նա նրանց անուններով էր կանչում։

Երբ ես տեղաւորվեցի և բադերը դադարեցին ձայն հանելուց, մի պարոն, որ դիմացս էր նստած, հարցրեց գիւղացուն, թէ շուկայ չէ՞ տանում արդեօք այդ թռչունները։

— Ոչ,—պատասխանեց գիւղացին,—տղաս վաղը չէ միւս օրը պսակվում է, հարսանիքի համար եմ տանում։

Նրա դէմքը փայլեց ուրախութիւնից, և նա նայեց չորս կողմը այնպէս, կարծես ուզում էր մեզ բոլորիս իր ուրախութեան մասնակից անել։

Մի տարիքով կին, որ չորս կողմից բարձերով էր պատած և շատ աւելի տեղ էր բռնել քան հարկաւոր էր մի մարդու համար, բարձր ձայնով սկսեց հայհոյել գիւղացիների հասցէին, որոնք իբր թէ ծանրաբեռնում են վագոնն ու նստարանները անվերջ և աւելորդ իրերով, մինչդեռ հէնց այդ կնոջ պատճառով՝ նրա մօտ նստած երիտասարդ պարոնը այնպէս էր սաստիկ սեղմվել պատին, որ չէր կարողանում շարժել ձեռքերն անգամ։

Գնացքը շարժվեց. գիւղացիներին հարցնող պարոնը բացեց լրագիրը և խորասուզվեց ընթերցանութեան մէջ։ Բայց գիւղացին, ինչպէս երևում էր, զրոյց անել էր ցանկանում։

— Որդիս ապրում է Պարիզում,—սկսեց գիւղացին.—նա խանութում գործակատար է։ Օրիորդը, որի հետ պսակվում է, նոյնպէս ծառայում է խանութում։

Պարոնը լրագիրը ծնկների վրա դնելով հարցրեց.

— Իսկ ինչպէ՞ս է հարսնացուն, գեղեցի՞կ է։

— Մենք ինքներս էլ չը գիտենք ոչինչ,—պատասխանեց գիւղացին.—մենք դեռ չենք տեսել նրան։

— Մի՞թէ։ Իսկ եթէ նա տգեղ լինի և դուր չը գայ ձեզ։

— Ամեն բան կարող է պատահել,—հանգիստ կերպով պատասխանեց գիւղացին.—բայց ես կարծում եմ, որ նա մեզ դուր կը գայ։ Մեր որդին մեզ շատ է սիրում և երևի հարսնացուն լաւը ընտրած կը լինի։

— Եւ յետոյ,—աւելացրեց գիւղացու կինը,—եթէ հարսնացուն մեր Ֆիլիպի սրտովն է, մեզ համար նա առաւել ևս լաւ կը լինի։

Եւ նա լուռ եկաւ և նայեց ինձ իր բարի և ծիծաղկոտ աչքերով։ Նրա դէմքը այնքան ջահել էր, որ նայելուց մարդ չէր կարող հաւատալ, թէ նա հասած տղայ ունի, որը պսակվելու է պատրաստվում։

Նա հետաքրքրվեց, թէ արդեօք ես էլ գնում եմ Պարիզ. և երբ ես պատասխանեցի, թէ այո՛, դիմացս նստած պարոնը հանաքով ասաց.

— Գրազ եմ բռնում, որ հէնց այս օրիորդն է ձեր որդու հարսնացուն։ Նա եկել է ձեզ ընդառաջ, բայց աւելի լաւ է համարում՝ մինչև Պարիզ հասնելը չասել ձեզ իր ով լինելը…

Բոլորի աչքերը դարձան դէպի ինձ։ Ես սաստիկ կարմրեցի։

— Եթէ դա ճշմարիտ լինէր, մենք աւելի լաւը չէինք ցանկանայ,—միաժամանակ ասացին գիւղացին և իր կինը։

Ես ասացի, թէ պարոնը ի հարկէ հանաք է անում, բայց պարոնը շարունակում էր իր հանաքը։ Նա գիւղացիների ուշադրութիւնը դարձրեց այն բանի վրա, որ ես երկու անգամ անցել էի ամբողջ գնացքը մի գլխից մինչև միւսը և բաւական երկար տատանվել՝ մինչև այս վագոնը բարձրանալը։

Ճանապարհորդները ուրախ ծիծաղում էին, իսկ ես շփոթված աշխատում էի ապացուցանել, որ բոլորովին կարիք չունէի տեղ փնտրելու, որովհետև ամբողջ գնացքում միակ ազատ տեղը հէնց այս վագոնումն էր, այստեղ։

— Այդ միևնոյն է թէ ինչպէս է եղել,—ասաց գիւղացու կինը.—բանը նրանումն է, որ դուք լաւ օրիորդ էք, և ես շատ ուրախ կը լինէի, եթէ մեր ապագայ հարսնացուն ձեզ նման լինէր։

— Այո՛,—հաստատեց կնոջ խօսքերը մարդը,—լաւ է ունենալ այդպիսի մի հարս։

Իսկ այդ հանաքը բաց թողնող պարոնը խորամանկութեամբ ինձ նայելով շարունակեց.

— Այ, կը տեսնէք, որ ես ձեզ չեմ խաբում։ Կը հասնենք Պարիզ, և ձեր որդին այս օրիորդը կը ներկայացնէ ձեզ իբրև իր հարսնացուն։

Շուտով գեղջկուհին շուռ եկաւ բոլորովին դէպի ինձ և սկսեց փնտռել մի ինչ-որ բան այն զամբիւղում, որ պահած ունէր իր ծնկների վրա։ Մի րոպէից նա հանեց մի ինչ-որ թխուածք և առաջարկեց ինձ վերցնել, ասելով որ ինքը իր ձեռքերով է թխել այս տաւօտ։

Ես մեծ յուզմունքով մերժեցի, ասելով որ մի քիչ հիւանդ եմ և դողացնում եմ։ Գեղջկուհին թխուածքը յետ դրեց զամբիւղ, բայց երբ մի րոպէից նա կրկին ինձ առաջարկեց վերցնել խաղողի մի ողկոյզ, ես արդէն մերժել չը կարողացայ։

Ես դժուարութեամբ էի կարողանում մերժել գիւղացու ծառայութիւնները, որը գնացքը կայարաններում կանգնած ժամանակ հէնց մի գլուխ ուզում էր ցած գնալ՝ ինձ համար տաք կերակուր բերելու։

Երբ ես նայում էի այդ բարի մարդկանց, որոնց մէջ այնքան պատրաստականութիւն կար սիրելու իրանց որդու ընտրածին, ես թախծութեամբ ու տխուր մտածում էի այն բանի մասին, թէ որքան լաւ կը լինէր, եթէ դրանց որդու ընտրածը ես լինէի… Այնքան լաւ է, երբ քեզ սիրում են ու քեզ համար ցաւում։ Չէ՞ որ ես համարեա թէ ծնողներ չեմ տեսել և միշտ ապրել եմ օտարների մէջ։

Ուղիղ մինչև Պարիզ՝ գիւղացին ու իր կինը շատ յաճախ թագուն ու պարզ հեոր այդ մասին իր կարծիքը յայտնէ և եթէ վերջնական եզրակացութիւնը համագումար հրաւիրելու աւելորդութիւնը ապացուցէ, այդ պարագայում միանգամայն աւելորդ կը լինի այդ նպատակով որևէ քայլ անել։

Ա. Նազարէթեան մի շարք այժմէական հարցեր յարուցելով, ցանկալի է գտնում համագումարի հրաւիրումը։ Նա յիշեցնում է Թատրոնի առաջադիմութեանը նպաստող պայմանների, դերասանութեան պրոֆեսիոնալ կազմակերպութեան և րեպերտուարի մասին, որի հետ կապված է նաև հօնօրարի խնդիրը։

Նախագահը շեշտում է նոյնպէս օտար հեղինակներին հօնօրար տալու կարևոր հարցը, որը արդէն օրինականացել է օրէնսդիր մարմինների կողմից։

Զ. Մամուլեան նոյնպէս դէմ է համագումար հրաւիրելու մտքին։

Քաղաքագլուխ Ա. Խատիսեան մի երկար ճառով ապացուցում է համագումարի օգտակարութիւնը, պերճախօս ապացոյցներով փաստելով նրա կարևորութիւնը։

Ի վերջոյ որոշվում է յանձնել Հ. Դրամ. Ընկ. վարչութեանը համագումարի օրակարգը մշակել և ապա ժողով հրաւիրել, երբ վերջնականապէս կարելի կը լինի պարզել համագումարի վերաբերեալ բոլոր հանգամանքները։

Երեկոյեան 7 ժամին խորհրդակցութիւնը աւարտվում է։ Ժողովական

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ուրբաթ, նոյեմբերի 25-ին, երեկոյեան ժամը 7-$^1/_2$-ին, Ազգագրական Ընկերութեան դահլիճում, նոյն Ընկերութեան անդամ Ս. Սարուխանը կարդաց իր դասախօսութիւնը «Օսմանեան հայերի ազգային սահմանադրութիւնը» վերնագրով։ Այս դասախօսութիւնը մի ամփոփումն է այն մեծ աշխատութեան, որ հեղինակը ահա երկու տարուց ի վեր տպագրում է «Արօր» ամսագրի մէջ, մի աշխատութիւն, որ թէև կրում է «Օսմանեան հայերի ազգային սահմանադրութիւնը» անունը, բայց պարունակում է իր մէջ հայկական հարցի գրեթէ ամբողջ պատմութիւնը։ Դասախօսութեանը ներկայ էին բաւական թւով անձինք։

ԿԱԹՈՂ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Մեզ հաղորդում են, որ Թիւրքիայի Բաղէշի (Բիթլիս) թեմը պատգամաւոր է ընտրել Սամսոն Ջէրքէզեանին, որ, ուրեմն, պէտք է ունենայ 2 ձայն։

ՊՐՈՖ. Վ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՏՕՆՈՒՄԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Թէ մասնաւոր կեանքում և թէ գիտական շրջանում սակաւ են դէպքեր, երբ սրտակցութիւնը, հոգեկան ջերմութիւնը, անկեղծութիւնը, ընդհանուր համակրանքը և մանկավարժական տաղանդը միացած լինեն ներդաշնակօրէն և համաչափ մի մարդու մէջ։ Եւ ի պատիւ և յուրախութիւն հայերի պէտք է ասել, որ պրոֆ. Վարդանեանը կազմում է մի այդպիսի երջանիկ բացառութիւն։ Նա ունի այն բոլոր յատկութիւնները, որոնց վրա մենք քիչ վերև մատնացոյց արինք։ Եւ որ այդ այդպէս է, դրա ապացոյցն է այն սրտագին տօնախմբութիւնը, որ տեղի ունէր ներկայ նոյեմբերի 9-ին—հակառակ իրան պրոֆէսորի ցանկութեան—նախ կանանց բժշկական ինստիտուտի հանդիսաւոր դահլիճում, ապա պսիխօ-նէվրօլօգիական ինստիտուտում և, վերջապէս, նրա բնակարանում։

Տօնախմբութիւնը սկսվեց այսպէս։ Համարեա հէնց նոր էր աւարտել Վարդան Իվանիչը իր դասախօսութիւնը կանանց բժշկական ինստիտուտում, և ահա նրա ընկեր-պրոֆէսօրները շրջապատեցին և խնդրեցին նրան գնալ հանդիսաւոր դահլիճ՝ նրա գիտական և մանկավարժական գործունէութեան 35-ամեակը տօնելու առիթով։ Կանանց բժշկական ինստիտուտում ջերմապէս և սրտագին շնորհաւորեցին Վարդան Իվանիչին ինստիտուտի պրոֆէսօրների կողմից Փարմակօլօգ Ա. Լիխաչէվ և ներկայացուցիչները ուսանողուհիներից։ Հէնց այդտեղ էլ շնորհաւորեց նրան Մանկավարժական Ակադէմիայի փոխնախագահ պրոֆ. Ալ. Նէչաէվ, Ֆրեբէլեան Կուրսերի և Զինուորա-Մանկավարժական Կուրսերի ներկայացուցիչները Սօլեանայա-Գօրօդօկում, նոյնպէս և պատգամաւորութիւն Պսիխօ-Նէվրօլօգիական Ինստիտուտի։ Վերջին հիմնարկութիւնը ինքնուրոյն կերպով էլ տօնեց նոյն օրը պրոֆ. Վարդանեանի յոբելեանը իր մօտ։ Զինուորական-Բժշկական Ակադեմիան ուղարկեց շնորհաւորելու յոբելեարին պրոֆ. Շավզովսկուն, որը շնորհաւորեց նրան՝ որպէս իր սանին և ֆիզիօլօգիայի բազմամեայ պրօզէկտօրին պրոֆ. Թարխանովի ամբիոնին կից։

Չը խօսելով ուղերձների և արժէքաւոր ընծաների մասին ընկեր-պրոֆէսօրներից, նախկին աշակերտներից և աշակերտուհիներից, մենք մեր պարտքն ենք համարում բերել միայն մի քանի աչքի ընկնող ֆիզիօլօգների, ֆիզիկոսների և քիմիկոսների հեռագիրների և նամակների բնագիրները, որոնցով իրանց յարգանքը և համակրութիւնն են յայտնում մի այդպիսի երկարատև, բազմարդիւն գիտա-մանկավարժական գործունէութեան համար։ Այսպէս, օրինակ, Տեխնօլօգիական և Պսիխօ-Նէվրօլօգիական Ինստիտուտի պրոֆ. Ն. Օրլով դիմում է հետևեալ շնորհաւորութեամբ. «Պսիխօ-Նէվրօլօգիական Ինստիտուտի ֆիզիկական լաբօրատօրիայի և իմ աշխատակիցների կողմից ջերմապէս ողջունում եմ Թանգագին յոբելեարին՝ գիտութեանը և հայրենիքին 35 տարի շարունակ փառաւորապէս և ազնիւ ծառայելու համար։ Ցանկանում եմ, որ պահպանվի Վարդանեան կորովը և ոյժը ապագայ աշխատանքներում դեռ շատ տարիներ»։

Նշանաւոր ֆիզիօլօգ պրոֆ. Իվ. Պավլով գրում է հետևեալը. «Սրտի խորքից շնորհաւորում եմ Թանգագին Վարդան Իվանովիչի ուսուցչական և գիտական գործունէութեան 35-ամեակը, առանձնապէս միշտ ջերմօրէն յիշում եմ մեր ընդհանուր ակադեմիական աշխատանքը. կեցցէ դեռ շատ տարիներ»։

Իսկ Վլադիմիրի համալսարանի մի այլ պրոֆ.՝ Վ. Զագօվէց—Վարդանեանի նախկին աշակերտ—հետևեալ խօսքերով դիմում է պրոֆեսօրին. «Սրտագին և ջերմագին շնորհաւորում եմ, մեծարգոյ ուսուցչին՝ Թանգագին Վարդան Իվանովիչին նրա յոբելեանի օրվայ առիթով. կեցցէ նա շատ և շատ տարիներ»։

Մանկական մանկավարժական գրականութեան մէջ յայտնի կին գործիչ և գրող Ա. Կալմիկօվա շնորհաւորում է նրան հետևեալ նամակով. «Թերյարգոյ Վարդան Իվանովիչ։ Հիւանդութիւնս արգելք հանդիսացաւ ինձ երէկ Ֆրեբէլեան Ընկերութեան այլ ներկայացուցիչների թւում անձամբ արտայայտելու իմ այն զգացմունքները, որ տածում եմ դէպի ձեզ այսքան տարիներ և բարեմաղթել ձեզ առողջութիւն և երկար կեանք։ Մեր ռուսական կեանքը ընթանում է գէօլօգիական էվօլիւցիաների դանդաղութեամբ, ուստի և գործիչները դաստիարակչական շրջանում պէտք է ունենան մեզ մօտ մօնօլիտների տիպ՝ այն է անվախճան։ Ձեր 35-ամեակը միայն ձեր առաջին անցած շրջան է, մեծարգոյ Վարդան Իվանովիչ»։

Զինուորա-Մանկավարժական Կուրսերի նախագահ գեներալ Մակշէեվ դիմում է պրոֆ. Վարդանեանին այսպէս. «Ձեր գիտնական գործունէութեան 35-ամեակի օրը ընդունեցէք դաստիարակչական կուրսերի պաշտօնակցի շնորհաւորութիւնները և լաւագոյն բարեմաղթութիւնները։ Տայ Աստուած առողջութիւն, ոյժ և աջողութիւն»։

Հետաքրքրական է Պսիխօ-Նէվրօլօգիական Ինստիտուտի խորհրդի կողմից արված շնորհաւորութիւնը յոբելեարին. «Մեծարգոյ Վարդան Իվանիչ։ Պսիխօ-Նէվրօլօգիական Ինստիտուտի խորհուրդը շնորհաւորում է ձեր գիտական և մանկավարժ. գործունէութեան 35-ամեայ յոբելեանը և անկեղծօրէն բարեմաղթում ձեզ շարունակել երկար տարիներ ձեր բազմարդիւն աշխատանքը գիտութեան և դաստիարակութեան ասպարէզում։ Ինստիտուտի նախագահ Բէխտէրէվ։ Գիտնական քարտուղար Գէրվէր»։

Աւետրական Դպրոցի դիրեկտոր և Պսիխօ-Նէվրօլօգիական Ինստիտուտի պրոֆ. Վ. Վագնէր գրում է հետևեալը. «Թոյլ տուէք մատուցանել ձեզ իմ անկեղծ և սրտագին շնորհաւորութիւնը ձեր գիտական գործունէութեան 35-ամեակի օրը. նախանձելի բաժին նրա համար, ով այդ օրը բարոյական գոհունակութեան զգացմունքով կարող է յետ նայել ազնիւ կերպով անցրած ճանապարհի վրա. սրտանց ցանկանում եմ ընթանալ նրան նոյն ճանապարհով երկար տարիներ»։

Եւրոպական անուն ունեցող գիտնական Զիբէր-Շումօվա, որպէս ներկայացուցիչ Փորձնական Բժշկականութեան Ինստիտուտի, ողջունեց այսպէս. «Սրտագին շնորհաւորում եմ յոբելեարին. հոգուս խորքից ցանկանում եմ աջողութիւն նրա ազնիւ, գիտական գործունէութեան»։

Պետերբուրգի համալսարանի ֆիզիօլօգիայի պրոֆեսօր Ն. Ե. Վւէդենսկի դիմում է յոբելեարին հետևեալ խօսքերով. «Մատուցանում եմ սրտագին շնորհաւորութիւն պատուելի յոբելեարին, բարեմաղթութիւն նրա ապագայ գիտական և դաստիարակչական գործունէութեան»։

Գիտութիւնների Ակադեմիայի ադիւնկտ Ֆ. Տուր ողջունում է այսպէս. «Սրտագին շնորհաւորում եմ մեծայարգոյ Վարդան Իվանովիչին և ցանկանում եմ ոյժ և եռանդ ապագայ աշխատանքների համար. ցաւում եմ, որ չեմ կարող անձամբ շնորհաւորել»։

Ի վերջոյ կը բերենք մի փոքրիկ քաղուածք նշանաւոր հայագէտ, ակադեմիկոս և պրոֆեսօր Ն. Մառի նամակից։ Պատուելի գիտնականը գրում է հետևեալը. «Թանգագին Վարդան Իվանովիչ. շատ վըշտացած ենք թէ ես և թէ կինս, որ առաջուց չը գիտէինք, թէ հասել է ձեր այժմ արդէն անցած յոբելեանի օրը. այսօր միայն իմացանք մենք այդ մասին «Рѣчь» լրագրից. ողջունում ենք ձեզ թէև ուշ, սակայն սրտանց և բարեմաղթում ենք նախ և առաջ առողջութիւն ձեզ, մաղթում ենք անկեղծօրէն, երկար և երկար կեանք և ընդմիշտ պահպանել այն հմայիչ բարեացակամութիւնը դէպի բոլոր մարդիկ, որ անդիմադրելիօրէն գրաւում է դէպի ձեզ համակրութիւնը և հոգեկան բարեմտութիւնը այն բոլորի, որոնք միայն ծանօթացել են ձեզ հետ և ով միայն հանդիպել է ձեզ»։

Զգացմունքների այդ բոլոր ջերմութիւնը հասկանալու համար, որոնք արտայայտված են վերոյիշեալ նամակների և հեռագիրների մէջ, մենք հարկաւոր ենք համարում Վարդանեանի կեանքի և գիտական ու հասարակական գործունէութեան կարճ նկարագիրը անել։

Վարդան Վարդանեանը ծնվել է 1853 թւին։ 1871 թւին նա աւարտեց Թիֆլիսի առաջին գիմնազիան. նոյն տարին նա մտաւ Զինուորական Բժշկական Ակադեմիան, որը աւարտեց 1876 թւին։ Ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ՝ 1877—8 թւին ծառայեց զօրքի մէջ։ 1890 թւի ապրիլի 1-ից նա Զինուորական Բժշկական Ակադեմիայի պրօզէկտօր էր։ 1892 թւին բժշկապետի կոչում ստանալու համար պաշտպանեց դիսերտացիա հետևեալ վերնագրով. «Գալվանական երևոյթներ գորտի կաշուի մէջ», ապա գնաց Կէօնիգսբերգ, ուր պարապեց հռչակաւոր ֆիզիօլօգ Հերմանի մօտ և նոյն հարցի վերաբերմամբ նա տպագրեց իր նոր աշխատութիւնը «Պֆլիւգէրի Արխիվ» ժուրնալի մէջ, որը հիմք ծառայեց նոր էլեկտրօ-շարժական թէօրիայի համար։ Արտասահմանից վերադառնալուց յետոյ պրօզէկտոր մնաց Զինուորական Բժշկական Ակադեմիայում։ Այցելել է եւրոպական բոլոր լաբօրատօրիաները, նոյնպէս և Կէմբրիջը և Լօնդօնը։ Նա ունի 6 աշխատութիւններ, բացի բժշկապետական դիսերտացիայից։ Նրա գրուածքներից մէկը թարգմանված է գերմաներէն։ Գոյութիւն ունի «Ֆիզիօլօգիայի դասընթացքները», որ կազմված է պրոֆեսոր Վարդանեանի դասախօսութիւններից. այդ դասընթացքների վրա ուսել և ուսանում են երկու սեռի երիտասարդների մի շարք սերունդներ։ Ներկայումս պրոֆեսօր Վարդանեանը իսկական պետական խորհրդականի աստիճան ունի, Կանանց Բժշկական Ինստիտուտի, Պսիխօ-Նէվրօլօգիական Ինստիտուտի, Մանկավարժական Ակադեմիայի օրդինար, և այլ շատ գիտական և կրթական հիմնարկութիւնների անդամ է։ Չը նայելով իր բազմազան գործունէութեանը՝ նա արդէն քառորդ դարից աւելի է, որ Պետերբուրգի եկեղեցական խորհրդի գործունեայ անդամ է. Նա նոյնպէս վայելում է սէր և համակրութիւն թէ եկեղեցական խորհրդի անդամների և թէ Պետերբուրգի հայ հասարակութեան մէջ։ Ցանկանք, որ ամեն մաքուր և ազնիւ գործին արձագանք տուող նրա ուսանողական հոգին և նրա անխոնջ եռանդը երկար ժամանակ պահպանվին թէ նրա համար, թէ նրա մօտ ծանօթների ու բարեկամների և թէ հայ հասարակութեան բարօրութեան և անուան համար։

Միքայէլ Ալլահվերդեանց

ԴՊՐՈՑԱԿԱՆ-ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՖՈՆԴ

Կ. Հ. Բարեգ. Ընկ. խորհուրդը ստացել է՝ հետևեալ նուիրաբերութիւնները յօգուտ դպր.-ուսուցչական ֆոնդի.

Առևտրական Տուն «Եղբ. Ա. և Ա. Միլօվ» 500 ր., Առևտ. Տուն «Ս. և Տ. Աֆրիկեան» 500 ր., Առևտ. Տուն «Ե. Ի. Խլաթով և Ընկ.» 200 ր., Եղբ. Եղիգարով և Նազարով 25 ր., Ա. Ի. Աստուածեան 26 ր., Եղբ. Բօզարջեաններ 300 ր., Մ. Ն. Պեսիս (հրէայ) 50 ր.։ Ընդամենը մինչև այժմ ստացված է 49,600 ր. 81 կ.։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ, ռուսաց Գէօրգի Պօբեդօնօսէցի տօնին, զինուորական տաճարում մատուցվեց պատարագ Փոխարքայի ներկայութեամբ։ Վերջը տեղի ունեցաւ զօրամասերի դիտում կոմսի կողմից։

◆ Պետական Դումայի հողային մասնաժողովը ընդունեց մի քանի փոփոխութիւններով՝ այն օրինագիծը, որ իրաւունք պէտք է տայ Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի, Գանձակի և Բագուի նահանգների գիւղացիութեանը՝ խզել իր պարտաւորեալ կապը կալուածատէրերից, գնելով վերջիններից հողաբաժիններ առանձին վճարով։

◆ Թիֆլիսում դեկտ. 9-ին կը բացվի վրաց հոգևորականութեան համագումարը։

◆ Բժ. Աւթանդիլեան նշանակվել է երկաթուղային հիւանդանոցի կառավարիչ։

◆ Այսօր 1-ին ընտրողական քաղաքամասում տեղի կունենայ դումայի նոր ձայնաւորների ընտրութիւն։

◆ Երաժշտական դպրոցի դահլիճում վարժուհիների ընկերութիւնը երեկոյթ է կազմակերպել Դօբրօլիւբօվի յիշատակին այսօր, երեկ. ժ. 8-ին։

◆ Թիֆլիսի շրջակայքի լեռներում եկել է փոքր քանակով ձիւն։ Երէկ մի քանի սայլեր մտան քաղաք ձիւնով ծածկված։ Ջալալ-Օղլիից հաղորդում են, որ Լօռու գաւառամասում եկել է ձիւն 1—2 վերշօկ հաստութեամբ։ Եղանակը սկսել է ցրտել։

◆ Ուրբաթ, նոյեմբերի 25-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը նիստ կազմելով Թիֆլիսի Հայ Գիւղ. Ընկերութեան ներկայացուցիչների հետ, մշակեցին պայմանագիր այն հողաբաժնի համար, որ քաղաքը տալիս է յիշված Ընկերութեան։ Գիւղ. Ընկերութեան կողմից ներկայ էին Ս. Բալանթար և Յ. Մելիք-Բախտամեան։ Հողը վերցվում է 24 տարով։

◆ Ուրբաթ, ամսիս 25-ին, երեկոյեան ժամը 8-ին, Բօրսայի դահլիճում կայացաւ միջնորդների գործերը կառավարող 1911—1914 թ.թ. համար ընտրված լիազօրների առաջին ընդհանուր ժողովը։ 100 լիազօրներից ներկայ եղող 88 լիազօրները ըստ իրանց դաւանութեան երդվեցին, որից յետոյ ներկայ աւագը առաջարկեց ժողովին առաջիկայ եռամեակի համար ընտրել աւագ և նրան օգնական՝ առաջուց որոշելով և դրանց յատկացվելիք ռոճիկների քանակութիւնը։ Գաղտնի քուէարկութեամբ որոշվեց աւագին յատկացնել 1300 ր., իսկ օգնականին 700 ր.։ Ապա առաջարկվեցին թեկնածուներ աւագի և օգնականի պաշտօնի համար՝ Բարսեղ Առաքելեան, Մակար Ջմշկեան, Մատվէյ Բելեաէվ և Անդրէյ Ադամիձէ։ Մ. Ջմշկեանը և Ա. Ադամիձէն հրաժարվեցին քուէարկվելու։ Գաղտնի քուէարկութեամբ և ձայների մեծամասնութեամբ աւագի պաշտօնի համար կրկին վերընտրվեց Բարսեղ Առաքելեանը և նրա օգնական ընտրվեց Մատվէյ Բելեաէվը։

◆ Այսօր, ժամը 7-ին, նշանակված է Հայոց Ազգագրական Ընկերութեան հրապարակային նիստը նոյն Ընկերութեան դահլիճում (Լերմոնտովսկայա № 1)։ Ատրպետը դասախօսելու է պարսից և հայոց Արշակունիների դրամների մասին։ Ցոյց են տրվելու իսկական դրամներ։ Կարող են ներկայ լինել և կողմնակի անձեր, բայց ոչ աշակերտներ։

◆ Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջիկայ 1912 թ. լրանում է հայկական տպագրութեան 400 ամեակը, որոշել է նախաձեռնող հանդիսանալ և պատշաճաւոր կերպով յաւերժացնել այդ նշանաւոր յոբելեանը։

◆ Վաղը, Արտիստական Թատրոնում, հայ դրամատիքական խումբը կը ներկայացնէ «Ցծ երթասը»։ Ներկայացման արդիւնքը ստանալու է Թիֆլ. Հայուհեաց Որբախնամ Ընկերութիւնը, որ ներկայումս գտնվում է նիւթական սուղ վիճակում և յոյս ունի, որ այսօրվայ ներկայացումը թատրոն կը գրաւէ հայ հասարակութեան, որի սրտին անշուշտ մօտ պէտք է լինի Ընկերութեան նպատակը։

◆ Այսօր Զուբալօվեան Ժողովրդական Տանը ցերեկով Պաւլօվը կը դասախօսէ Լօմոնոսովի մասին։ Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրվին պատկերներ մոգական լապտերով։

◆ Թիֆլիսում ներկայումս կառուցվում է նոր շինութիւն՝ Կովկասեան Թանգարանի համար։ Այդ շինութեան մօտից, Լօրիս-Մելիքեան փողոցով շրջվելով դէպի Գօլօվինսկի պրօսպէկտը, անցնում է էլեկտրաքարշը, որ յատուկ մասնաժողովի կարծիքով կարող է վնասել շինութեան հիմքին։ Այդ պատճառով հարց է յարուցված, որպէսզի էլեկտրաքարշի գիծը շարունակվի Լօրիս-Մելիքեան փողոցով մինչև պետական բանկի Թիֆլիսի գրասենեակը, որի մօտ նա կը լինի շրջապտոյտ դէպի Գօլօվինսկի պրօսպէկտ՝ ինտենդանտական վարչութեան կողքով։

◆ Քաղաքային տնտեսական մասնաժողովը տաւարի մսի փութը 10$^1/_2$ կոպէկից դարձրեց 11 կոպէկ։

◆ Այսօր Բժշկական Ընկերութեան շինութեան մէջ (Ալէքսանդրեան այգու գլխին) Սարգսեանը հայերէն, առ. ժ. 9$^1/_2$—11-ը, կը խօսէ երեխաների համար առիւծների մասին։ Հասակաւորների համար բժ. Ֆլօրինսկի՝ ռուսերէն՝ երեկ. ժամը 5—6-ը կը խօսէ մարդու կազմուածքի մասին։ Մուտքը ձրի է։

◆ Թիֆլիսի կանանց բարձր դասընթացների վարչութիւնը հրաւիրել է Պետերբուրգի Համալսարանի և Կայսերական Հնագիտական Ինստիտուտի աւարտած Ս. Խանկալամեանին՝ կարդալ դասախօսութիւններ սլաւօնական-ռուսական հնագիտութեան մասին։

◆ Այսօր Արտիստական Թատրոնում տեղի կունենայ Պօլտավցեվի օպերետային խմբի առաջին ներկայացումը։ Կը տրվի „Въ вихрахъ страстей“.

◆ Այսօր Արքունական Թատրոնում երկրորդ անգամ երեկոյեան կը տրվի «Կոմս Լիւքսէնբուրգ» կոմ. օպերան։ Ցերեկով էժանացված գներով «Տրավիատա»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

Ուրբաթ, նոյեմբերի 25-ին, Գրական-Գեղագիտական Սալօնում հերթական ժուր-ֆիքսը այցելել էին շատ հանդիսականներ, որոնց մէջ բաւականաչափ օտարականներ։

Ժուր-ֆիքսը, որ միշտ այցելում են գրականագէտներ, արտիստներ, այս անգամ էլ թողեց հաճելի տպաւորութիւն։

Յ. Սօլօվեան, բանալով հանդէսը, հաղորդեց, որ այսօրվայ երեկոյթը նուիրված է Մօսկվայի ռուս գրասէրների 100-ամեայ յոբելեանին, որը լրացաւ հոկտեմբերի 22-ին, և Դօբրօլիւբօվի մահվան 50-ամեայ տարեդարձին։

Սօլօվեան ծանօթացրեց Մօսկվայի այդ ականաւոր ու ուշագրաւ ընկերութեան ուսանելի շատ կողմերի հետ։ Նրա ասածից երևաց, որ ընկերութիւնը Մօսկվայի մտաւորականների կրթական-գեղարուեստական գործին և նոր գրողների տաղանդի զարգացմանը մեծ զարկ է տուել իր դասախօսութիւններով և երեկոյթներով։ Բաւական է յիշատակել Ստորօժենկօյի, Բօբօրիկինի, Ա. Վեսելօվսկիի և ուրիշ բազմաթիւ ականաւոր գրական գործիչների անունները, որպէս զի երևայ ընկերութեան արած ծառայութիւնը։

Սօլօվեանից յետոյ խօսեց Պետրոս Զաքարեանը ռուսերէն, ծանօթացնելով Դօբրօլիւբօվի գործունէութեան հետ, ուրուագծելով ռուս գրականութեան ուղղութեան համակրելի կողմերը։

Այնուհետև բարոնեսա Օ. Մէյէնդօրֆ կարդաց Դօբրօլիւբօվի «О, милый другъ, я умираю!» յայտնի բանաստեղծութիւնը. օր. Թամար Մելիք-Շահնազարեանը մաքուր առոգանութեամբ արտասանեց Ուլանդի «Երգչի անէծքը» և ուրիշ կտորներ էսպերանտօ լեզուով։ Հետաքրքրական էր ուսանող Նեժինսկիի «Ճանապարհ» բանաստեղծութիւնը էսպերանտօ լեզուով և այդ լեզուի առիթով տուած թռուցիկ բացատրութիւնները։ Օր. Եվէլին կարդաց Լերմոնտովի «Իսկը» ֆրանսերէն լեզուով իր թարգմանած մի կտոր։ Վերջում պրոֆ. Բրօյէր շատ սիրուն երգեց իտալերէն լեզուով մի քանի կտորներ, որոնց մէջ շատ հաճելի տպաւորութիւն թողեցին Լիւցիի «Ave Maria»-ն և Bimino-ի «Amor Aichiedo»-ն։

Հիւրերը ցրվեցին գիշերվայ մօտ 12 ժամին հաճելի տպաւորութեան տակ։ Z.

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Ինչով են կենդանի մարդիկ», Լ. Ն. Տոլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 40, գ. 10 կ.։ 2) «Երկու եղբայր» (հէքիաթ), Արշամ Տէր-Խաչատրեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 36, գ. 10 կ.։ 3) «Մաղաքիա արքեպ. Օրմանեան և կաթողիկոսական ընտրութիւն», Գարեգին վ. Յովսէփեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 54, գ. 10 կ.։ 4) «Քեֆիր պատրաստելու համառօտ գործնական ձեռնարկ», յաւելուած «Գիւղատնտես»-ի, կազմեց պրովիզոր Ալ. Սարուխանեանց, Թիֆլիս, 1911 թ., էջ 25. 5) «Անասնապահութիւն» (ընտանի կենդանիների վարակիչ և ոչ-վարակիչ հիւանդութիւնների մասին), Ի. Բ. Լիւբոմուդրովի, փոխադր. Կ. Կ. Մելիք-Շահնազարեանցի, Բագու, 1911 թ., էջ 95, գ. 50 կ.։ 6) «Թէ

տաքրքրութեամբ նայում էին ինձ…

Երբ մենք հասանք Պարիզ և գնացքը կանգ առաւ, ես օգնեցի նրանց վագօնից դուրս հանելու զամբիւղները և ճանապարհեցի մինչև դուրսը։ Տեսնելով մօտ վազող մի բարձրահասակ պատանու, որը բարձրաձայն յայտնելով իր ուրախութիւնը՝ ընկաւ նրանց գիրկը, ես մի կողմ քաշվեցի։ Նա ամուր կերպով համբուրում էր մերթ մօրը, մերթ հօրը, իսկ ծնողները փայլում էին ուրախութիւնից։ Նրանք բոլորը այնքան տարված էին, որ չէին լսում բեռնակիրների զգուշացնող ձայնը, որոնք ճանապարհորդների ապրանքներն ու պայուսակները շալակած կամ սայլակները լցրած ամեն րոպէ երթեւեկում էին նրանց մօտով՝ աջ ու ձախ հրելով նրանց։

Երբ նրանք վերջապէս դուրս եկան կայարանից, ես մի քանի րոպէ հետևում էի նրանց։ Որդին մի ձեռքով տանում էր զամբիւղը, միւսով գրկել էր մօրը։ Մօր հետ խօսելուց նա սիրալիր կերպով խոնարհվում էր դէպի նա և նրա բոլոր ասած խօսքերի վրա բարձրաձայն ծիծաղում։ Նա իր մօր նման ուրախ ու ծիծաղկոտ աչքեր ունէր և լայներես ժպիտ։

Երեկոյ էր. աղջամուղջը վրա էր հասել, որը մթնում էր։ Ես բարձրացրի վերարկուիս օձիքը այնպէս, որ երեսս համարեա բոլորովին ծածկվում էր նրա մէջ և մի քիչ յետ մնալով գնում էի նրանց ետևից մի քանի քայլի վրա։

Գիւղացին շոյեց մոխրագոյն հաւի գլուխը, որ դուրս էր հանված զամբիւղից, և դառնալով կնոջը՝ ասաց.

— Ափսոս, շատ ափսոս։ Եթէ ես հաստատ իմանայի, որ նա մեր հարսնացուն չէ, ես անպատճառ նրան կը նուիրէի մեր մոխրագոյն հաւը։

Կինն իր հերթում շոյեց հաւի գլուխը և համաձայնվեց ամուսնու հետ։

— Այո, եթէ մենք իմանայինք։

Եւ ձեռքի լայն շարժումով ցոյց տալով կայարանի առաջ խմբված և շտապ անցնող մարդկանց՝ աւելացրեց.

— Այժմ նրան չէ կարելի գտնել այս ամբոխի մէջ։

Մինչ այդ՝ որդին վերադարձաւ կառքով։ Նա հոգատար կերպով նստեցրեց ծնողներին կառք, իսկ ինքը տեղ բռնեց նրանց դիմացը, կառապանի մօտ։ Նա ինձ երևաց ուժեղ և բարի, և ես ակամայ մտածեցի, որ նրա հարսնացուն բաղդաւոր է և երջանիկ…

Երբ կառքը հեռացաւ և կորաւ տեսողութիւնից, ես սկսեցի դանդաղ կերպով թափառել փողոցներում…

Ես չէի ցանկանում տուն գնալ… չէի ցանկանում մենակ մնալ իմ փոքրիկ և տխուր սենեակում։ Ա՜խ, ես մենակ մնալ չէի ուզում, այնքան չէի ուզում…

Ես 20 տարեկան էի և ինձ հետ դեռ ոչ ոք սիրոյ մասին չէր խօսել…

Թարգ. Սամս. Յակոբեան

ինչպէս են տարածվում սերմերը», Նիկ. Սարգսեանի, Թիֆլիս, 1911 թ., էջ 32, ձրի յաւելուած «Հասկեր» ամսագրի։

ՄԱՄՈՒԼ

Այս վերջին ամիսները հայ պարբերական մամուլը հարստացաւ քանակութեամբ՝ մի քանի նոր լրագիրներով և հանդէսներով։

Մօսկվայում սկսեց հրատարակվել «Մարտ» անունով գրական-հասարակական երկշաբաթաթերթ։ Երեւանում, գրեթէ միաժամանակ երկու թերթ՝ «Նոր-Ջայն» անունով գրական-հասարակական շաբաթաթերթ և «Կռան» անունով հասարակական-տնտեսական և գրական-երգիծաբանական շաբաթաթերթ։ Շուշում, նոյեմբերի 17-ից, «Ղարաբաղ» անունով գրական-հասարակական թերթ, շաբաթը երկու անգամ։ Բագւում «Նոր-Խօսք», որի մասին յիշել ենք արդէն։ Իսկ Թիւրքիայից ստացանք հետևեալ նոր հանդէսները. 1) Ամասիա, գաւառաբարբառներու կիսամսեայ հանդէս, որ հրատարակվում է Ամասիա քաղաքում, 2) Վանտոսպ, կիսամսեայ հանդէս, որ հրատարակվում է Վան քաղաքում, 3) Հայ գրականութիւնից, հանդէս ամսօրեայ գրական-գիտական և գեղարուեստական, որ հրատարակվում է Զմիւռնիա քաղաքում։ Խօսենք հետզհետէ այդ նոր թերթերի և հանդէսների մասին։

«Մարտ» երկշաբաթաթերթը, որի միայն 2 համարներն ենք ստացել, լոյս է տեսնում խմբագրութեամբ Արշակ Թումանեանի (Կայծունի), որ անյայտ անձն չէ հայ գրական շրջաններում, հետևաբար և նոր թերթի ուղղութիւնն ևս մօտաւորապէս կարելի է գուշակել։ Մեր հայեացքով Մօսկվայի պէս քաղաքում հրատարակվող հայ թերթը պէտք է բոլորովին ուրիշ միսիա և նպատակ ունենայ, քան բուն հայ ժողովրդի մէջ հրատարակվող թերթերը։ Մօսկվայում հրատարակվող հայ թերթը ամենից առաջ պէտք է ծանօթացնի հայ ընթերցող հասարակութեանը ռուսական կեանքի, իրականութեան և մտքի երևոյթների ու արտայայտութիւնների հետ և ոչ թէ զբաղվի այնպիսի հարցերով, որոնցով զբաղվում է հայ մամուլը Կովկասում և Թիւրքիայում։ Ի՞նչ հետաքրքրութիւն և շահեկանութիւն կարող են ունենալ երևանցու, թիֆլիսեցու համար տեղեկութիւնները և յօդուածները՝ օրինակ՝ կաթողիկոսական խնդրի մասին, երբ նա աւելի մանրամասն կարդացել է տեղական լրագիրներում։ Մինչև հիմա մեր ստացած «Մարտի» համարների մէջ եթէ կայ մի հետաքրքրական բան, այդ էլ Խրիմեան կաթողիկոսի նամակներն են, գրված՝ հանգուցեալ Աբգար Յովհաննիսեանին, կաթողիկոս ընտրվելուց առաջ և յետոյ։ Այդ նամակները ցոյց են տալիս, թէ որքան մեծ սխալ գաղափար է ունեցել այն ժամանակ հայ առաջադիմական բանակը և ինտելիգենցիան Խրիմեանի կարծեցեալ ժողովրդասիրական, ժողովրդապետական և առաջադիմական յատկութիւնների մասին։ Նա եղել է միայն թունդ միզուական և նրա իդէալը եղել է սիրելի «Պետրէն» (Պետրոս Սիմէօնեանցը) և նրա «անզուգական ու մտերիմ բարեկամը» միայն Աբգար Յովհաննիսեանը, նա, ի դէպ է ասել, որին այսօր «Հորիզոնը» իր օգնութեան է կանչում հայ վաճառականների դէմ մղած արշաւանքի մէջ...

Գալով մեր գաւառական թերթերին («Նոր-Ջայն», «Կռան», «Ղարաբաղ»), պէտք է ասենք, որ, մեր կարծիքով, գաւառական թերթը մեր հայերիս մէջ պէտք է նախամեծարապէս զբաղվէ գաւառական կեանքի յարուցած հարցերով, նրա կարիքներով, նրա պահանջներով։ Ընդհանուր քաղաքական, ազգային, սօցիալական հարցերով նա պէտք է զբաղվէ այն չափով, ինչ չափով նրանք անհրաժեշտ են գաւառական կեանքի ուսումնասիրութեան և նրա երևոյթների լուսաբանութեան համար։

Միթէ «Նոր-Ջայնը» և «Կռանը» ահագին ծառայութիւն մատուցած չէին լինի, եթէ Արաքսի աւազանի պէս մօտ 700,000 հայ ազգաբնակութիւն ունեցող, կամ «Ղարաբաղ» թերթը՝ Ղարաբաղի պէս մօտ 250,000 հայ ազգաբնակութիւն ունեցող երկիրների կեանքի ուսումնասիրութեամբ և լուսաբանութեամբ զբաղվէին, քան Տրիպօլիսի, երիտասարդ-թիւրքերի հարցով և կամ «ընդհանուր խոհերով», «գրական ակնարկներով» և աննպատակ սրախօսութիւններով Թիֆլիսի գրողների և օրագրողների հասցէին և այլն, և այլն։

Այդ կողմից մանաւանդ, տարօրինակ և ծիծաղելի տեսարան է ներկայացնում «Ղարաբաղ» թերթը։ Հէնց իր առաջին համարից նա ցոյց է տալիս նախ թայֆայական ոգի (և ուրիշ կերպ էլ անկարող էր լինել, քանի որ թերթի գլխաւոր աշխատակիցը Վ. Փափազեանն է հանդիսանում, որ չէ կարողացել իր թայֆայական նեղ, գծուծ ոգին արտայայտելու հաճոյքից զրկել իրան գոնէ առաջին համարում), թէև առաջնորդողը խոստանում է «հեռու լինել թայֆայական նեղսրտութիւնից», բայց անմիջապէս դաւաճանում է այդ խոստմանը Վ. Փափազեանի «գրական ակնարկներ» յօդուածի մէջ, ուր, հեղինակը, օգտվելով, անշուշտ, որ խմբագիր բժ. Ն. Եարամիշեանը շատ էլ ծանօթ չէ հայ գրական աշխարհի երևոյթների հետ, իր կեղտոտ լաթն է լուանում իր հակառակորդների հետ և մեղադրում է ուրիշներին այն բանի մէջ, որի մէջ հայ մամուլը հէնց իրան Վ. Փափազեանին մեղադրեց նորերս։ Եթէ բժ. Ն. Եարամիշեանը այդ պասկվիլային յօդուածի փոխարէն տար մեզ մի լաւ յօդուած Ղարաբաղի տնտեսական, կամ դպրոցական, կամ արդիւնաբերական կեանքի մասին, եթէ նա, իբրև տեղական թերթ, իր կարծիքը յայտնած լինէր հոկտ. 30-ին կայացած կաթողիկոսական պատգամաւորի ընտրութեան մասին, այսինքն Ղարաբաղի ամբողջ թեմի կամ երկրի հայ ազգաբնակութեան տրամադրութեան մասին դէպի հայոց եկեղեցու պետի ընտրութիւնը, անտարակոյս, դա աւելի արժէքաւոր, աւելի գնահատելի կը լինէր, քան Վ. Փափազեանի միտումաւոր և պաթոսային յօդուածը իր կեղտոտ սատառով։ Անարժան վարմունք է նաև մի նոր թերթի կողմից հէնց առաջին համարում զբաղվել քսութիւններով, ինչպէս օրինակ նա թոյլ է տուել իրան գրել, թէ «Թիֆլիսում մի խումբ մշակականներ անջատվելով Գր. Արծրունու այսօրվայ «Մշակից» և այլն։ Ովքե՞ր են այդ մի խումբ մշակականները. Երբ և որտեղ նրանք յայտնեցին, թէ իրանք մշակականներ են եղել և այժմ անջատվել են։ Եթէ «Ղարաբաղը» այդ լուրը առել է «Հորիզոնից», նա, կորեկտ լինելու համար, պէտք է լաւ հասկանար, թէ ինչ գին ունեն «Հորիզոնի» գըրածները «Մշակի» մասին։

Ցաւում ենք, որ «Ղարաբաղը» հէնց առաջին համարից ցոյց չը տուեց այն կորեկտութիւնը և լրջութիւնը, որ նա այնքան պաթոսով ուրիշներին է քարոզում։

Թիւրքահայ հանդէսների մասին յաջորդ անգամ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 23 Նոյեմբերի

Ձեր յարգելի լրագրի № 262-ում տպված իմ նամակի առիթով ես պարտք եմ համարում հետևեալ ուղղումներն անել։

Լիովին հաստատելով «Հորիզոն» լրագրի դէմ իմ այն մեղադրանքները, որոնք վերաբերում էին վաճառականութեան դէմ եղած յարձակումներին և անարդար գնահատմանը այն լուսաւոր երևոյթի, որ հայ վաճառականութիւնը ակտիվ դերով գալիս է հասարակական ասպարէզ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի ընտրութիւնների գործում,—որպիսի երևոյթի առիթով ես նորից յոյս եմ յայտնում, որ վաճառականութիւնը ապագայում էլ պիտի խաղայ բարերար դեր յօգուտ հայ ժողովրդի, նրա քաղաքակրթութեան և եկեղեցու,—ես հարկ եմ համարում իմ միւս մեղադրանքների առիթով, որքան որ նրանք վերաբերվում են «Հորիզոնի» այժմեան խմբագրական կազմին, ասել, որ ես այդ մեղադրանքները թոյլ եմ տուել ինձ շնորհիւ իմ ունեցած անճիշդ տեղեկութիւնների «Հորիզոն» լրագրի խմբագրական կազմի մասին։ Այժմ տեղեկանալով ստոյգ աղբիւրից յիշեալ լրագրի խմբագրական կազմի մասին, յայտնում եմ, որ այդ մեղադրանքներն «Հորիզոն» լրագրի խմբագրութեան հասցէին անհիմն են, որի համար ես արտայայտում եմ անկեղծ ցաւակցութիւն։

Թիֆլիսի վաճառականութեան աւագ՝
Ա. Մելեանց

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Թէհրանի փողոցներում կոտորած է. տրամադրութիւնը չափազանց գըրգռված է։ Դրութիւնը յուսահատական է։

✦ Թէհրանում անխուսափելի են համարում Եփրեմի ձերբակալութիւնը։

✦ Բախտիարները Թէհրանում յայտարարութիւն կպցրին մայրաքաղաքում պատերազմական դրութիւն հաստատելու մասին, բայց Եփրեմը վերացրեց այդ միջոցը։

✦ Լօնդօնում անհաւատալի լուր է պտտվում, թէ իբր Պարսկաստանը պահանջել է կանգնեցնել ռուսաց զօրքերին Ղազվինում, սպառնալով հակառակ դէպքում սկսել յարձակողական գործողութիւններ։

✦ Շիրազում և Սպահանում բօյկօտի ենթարկվեցին անգլիական ապրանքները։

✦ Թէհրանի աւստրիական դեսպանը տեղեկացնում է, որ Պարսկաստանում աբսօլիւտիզմը անխուսափելի է։

✦ Որովհետև Գերմանիան գործողութեան լիակատար ազատութիւն տուեց Ռուսաստանին Պարսկաստանում, Ռուսաստանը թոյլատրելու է Գերմանիային անյապաղ կառուցանել երկաթուղի Խանեկէնից Թէհրան։

✦ Լուրերի համաձայն, յայտնի Ֆարման-Ֆարման սպանվել է Ղազվինում։

✦ Եփրեմը հրաժարական տուեց ոստիկանապետի պաշտօնից։

✦ Թէհրանի ռուսներին բաժանված է զէնք։

✦ Ամերիկան պատուիրագրեց Թէհրանի իր դեսպանին՝ ամեն կերպ հոգալ Շուստէրի ապահովութեան մասին։

✦ Գերմանական ու աւստրիական աղբիւրները հաստատ տեղեկացնում են, որ Մահմէդ-Ալիին ռուսները ի գահ են կոչելու, անուանելով նրան «շահ-հայր-խնամակալ»։

✦ Տրիպօլիսում բայրամի տօնի առիթով իտալացիները 500 գլուխ ոչխար են ընծայել արաբներին։

✦ Ներկայումս իտալացիները Տրիպօլիսում ունեն 75,000 մարդուց բաղկացած զօրաբանակ, 120 թնդանօթ ու գնդակացիր։ Թիւրքերը գտնված տեղերում ունեն 40,500 զինւոր 68 թնդանօթով ու գնդակացիրով։

✦ Հռոմում կազմվել է մի մասնաժողով, որ, երևան հանելով թիւրքերի ու արաբների անլուր գազանութիւնները, բողոքելու է եւրօպական պետութիւններին այդ գազանութիւնների դէմ։

✦ Թիւրքիան որոշել է Տրիպօլիսի հարցի լուծման համար միջնորդութիւն խնդրել Անգլիայից։

✦ Իտալիան տեղեկացրեց եւրօպական պետութիւններին, որ նա վճռել է պատերազմական գործողութիւններ սկսել եւրօպական ջրերում։

✦ Կ. Պօլսում հաստատ տեղեկութիւն ունեն, որ Իտալիան ռմբակոծելու է Կ. Պօլիսը։ Բ. Դուռը շուարված է. նա մի խիստ նօտա է ուղարկում մեծ պետութիւններին։ Միւս կողմից Բ. Դուռը շտապեցնում է Դարդանէլը պաշտպանելու արտակարգ միջոցները։

✦ Թիւրքաց զօրքերի հրամանատար Էնվէր-բէյը, անգլիական տեղեկութիւնների համաձայն, 115,000 բեդուինների, 3500 թիւրքերի գլուխն անցած նոր տեսակի 30 թնդանօթով մօտենում է Բէնգազիին։

✦ Պարզվում է, որ յիրաւի Գերմանիան հրացէն, գնդակացիրներ, հրացաններ, փամփուշտներ և թնդանօթներ է ուղարկում գաղտնի կերպով չինական կառավարութեան։ Չին յեղափոխականները սպառնում են սրի քաշել ամեն մի հանդիպած գերմանացու։

✦ Պարիզում խօսում են, որ գաղտնի համաձայնութիւն է կապվել Ռուսաստանի և Եապօնիայի միջև՝ Չինաստանի կնքած ապագայ փոխառութեան $60^{0}/_{0}$-ը ստանալու դիտաւորութեամբ։

✦ Մանջուրիայում տիրում է կրիտիկական դրութիւն։ Եկել են մեծ թւով եապօնացի զինւորներ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեամինովսկայա փողոց, № 8.
(Կ. Հ.) 416. 100—58

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(Ա. Օ.) 669. 100—79

ԲԺԻՇԿ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտովսկայա, № 66.
(Ա. Օ.) 1035. 100—26

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս (606), միզատրական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ առ. ժ. 9—10-ը։
Սօլօլակ, Բէբուտովսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տէլէֆօն № 1175.
(Ե. Հ. Կ.) 888. 100—33

ԲԺՇԿՆ. ՖԷԼԴՇԷՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Սրսկումներ, տրիպէրի լուացումներ, վիրաբուժութիւն, մասսաժ, էլեկտրականութիւն։ Հիմնաւոր բուժումն սուր և խրոնիք. տրիպէրի, սերմնահոսութեան, սեռական թուլութեան և անկարողութեան՝ հմուտ բժիշկ. ցուցմունքով։ Օտարերկրեայ հիւանդներին գրաւոր խորհուրդներ և ռեցեպտներ (վճարը 3 ր.)։ Նւարներին ցոյց եմ տալիս հմուտ մասնագէտ բժիշկների բոլոր հիւանդութիւնների. նաև կանանց և ծննդաբեր. հիւանդ. բժիշկների։ Ծառայողներին և աշակերտ-աշակերտուհիներին բժ. օգնութիւնը մեծ զիջումով։ Իմ կազմած «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարանը», գինը 50 կոպ., կարելի է պահանջել ինձանից կամ Թիֆլիսի բոլոր հայ գրախանութներից նալօժով։ Ընդունելութիւնը՝ կանանց 2—3 ժ., տղամարդկանց 3—4 ժ. ամեն օր։ Հասցէ. Тифлисъ, Семеновская ул., № 9, Վօրօնցովի արձանի մօտ։
(Ե. Հ. Կ.) 892. 50—31

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծախված է ԵՐԿՈՒ ՄԻԼԻՕՆԻՑ աւելի սրուակ
ԹԱՐՄՈՒԹԻՒՆ և ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ
տալիս է ամեն մի
ԿԱՆԱՑԻ ԴԷՄՔԻՆ
ԿԱԶԻՄԻ ԿՐԷՄԸ
ՄԷԹԱՄՕՐՖՕԶԱ
ԱՐՄԱՏԱՊԷՍ հեռացնում է բծիկները, բշտիկները, խալերը, պզուկները, այրուածքը և դէմքի այլ դեֆեկտները։
(П.83445) 10—8

ВИДЪ БАНКИ
CRÈME APPROUVÉE PAR LE DÉPARTEMENT DU COMMERCE ET DES MANUFACTURES
METAMORPHOSA
CAZIMI
MOSCOU
Cazimi
Утв. Департ. Торг. и Мануфэ. №4683.

Золотая медаль Лондонъ 1893 г.
ОСТЕРЕГАТЬСЯ ПОДДѢЛОКЪ!
ПРОВИЗОРА
Г. Ф. ЮРГЕНСЪ
БОРНО-ТИМОЛОВОЕ МЫЛО
ОТЪ ПОТА, ЗАГАРА, ВЕСНУШЕКЪ, УГРЕЙ, ПРЫЩЕЙ И ЖЕЛТЫХЪ ПЯТЕНЪ.
БЛАГОВОННОЕ ТУАЛЕТНОЕ МЫЛО ВЫСШАГО ДОСТОИНСТВА
ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ
1/1 кус. 50 к. 1/2 кус. 30 к.
Главный складъ у Г. Ф. Юргенсъ, Москва
(M. 5195) 57. 24—17

ՀՈՆՈՐՐԷԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO-ՊԻՉԻՆ"
Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր և թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում և կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ ընթացք։
ՊԱՀԵՍՏ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախսը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում։
(Կ.) (П.12474) 0 42

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՑՈՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տէլէֆօն 388.
(Հ. Ու. Կ.) 761. 100—47

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
Թիֆլիսում
վաճառվում են Բագւի Հ. Կ. Միութեան հետևեալ գրքերը.

Վ. Փափազեան.	«Լեոն Բ.»	15 կ.
»	«Սահակ և Մեսրոպ»	15 »
»	«Գագիկ Բ.»	15 »
»	«Արտաշէս Բ.»	15 »
»	«Վարդանանց պատերազմը»	30 »
Մ. Առաքելեան.	«Տրդատ և Գրիգոր Լուսաւորիչ»	15 »
»	«Վահան Մամիկոնեան»	15 »
Մ. Ք. Ղազարեան.	«Մուշեղ և Մանուէլ» (Մամիկոնեան իշխաններ)	30 »
Պալեան.	«Միքայէլ Նալբանդեանի տնտեսական թէօրիան»	25 »
Ս. Գալաչեան.	«Կօօպերացիա»	20 »
Մ. Ջմշկեան.	«Ծոցի օրացոյց»	20 »
Աֆինեան.	«Շիրակ օրացոյց», ծոցի	20 »
»	» » պատի	50 »
Ման. Ջաչիկեան.	«Ծոցի օրացոյց»	15 »

Միևնոյն գրատանը վաճառվում են հրապարակում լոյս տեսած հայերէն և ռուսերէն բոլոր դասագրքերը։ Պատուէրները կատարվում են արագ։
Դիմել՝ Тифлисъ. Центральной книжной торговлѣ. 1112. 1—1

Լոյս տեսաւ
Մ. ՉՄՇԿԵԱՆԻ
1912 Թ.
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Վաճառվում են Կովկասի քաղաքների նշանաւոր գրավաճառանոցներում և թղթեղէնի յայտնի խանութներում։ Մեծ քանակութեամբ ցանկացողները, ժամանակին ստանալու համար, թող վաղօրօք ուղարկեն իրանց պատուէրները։ Վերադիր վճարով ոչ ոքի չեն ուղարկվում։
Հասցէն՝ Թիֆլիս, Գարաչեվսկի № 5.
МАКАРУ ЧИМИШКЯНУ—Մ. ՉՄՇԿԵԱՆ
(Կ. Ե.) 1036. 10—9

Դերձակ
ԼԵՒՈՆ ՃԵՊԷԵԱՆՑ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է
Դվօրցօվայա փողոց, Վրաց Ազնուական. Բանկի շինութեան բակը, Թատրոնի մօտ։
(Կ. Հ. Ու.) 1111. 10—2

ՆԿԱՐԻՉ
ԱՌԱՔԵԼ ՍԱԳԻՆԵԱՆՑ
Նախկին ուսուցիչ Գէորգեան ճեմարանի և էջմիածնի նկարիչ)
Ընդունում է զուտ հայկական ճաշակի՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐԻ, ԽԱՉՎԱՌՆԵՐԻ, ԽԱՉԿԱԼՆԵՐԻ, նոյնպէս և ՊՈՐՏՐԷՏՆԵՐԻ ու ԴԷԿՈՐԱՑԻԱՆԵՐԻ պատուէրներ նպաստաւոր պայմաններով։ Հասցէն՝ Тифлисъ. Красильная ул., ограда церкви св. Георгія (на Майданѣ).
(Ա. Օ.) 1089. 10—7

Եղբ. Ալաւերդիովների
այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ չափաւոր գներով։ Կատալօգները ուղարկվում են ՁՐԻ։ Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.), Авсаркисову.
(Հ. Ու. Կ.) 1045. 15—12

Քիրէով է տրվում
ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ՍԵՆԵԱԿ
(Սապեօրնայա փ., տ. 26. Աբրահամ. Թատրոնի յետև(Շքեղ պօդեզդ, առանձին մուտք. չոր, լոյս. լուսամուտից գեղեցիկ տեսարան. էլեկտրական լուսաւորութիւն, վաննա, լրագիրներ և հանդէսներ։
ԳԻՆԸ ԱՄՍԱԿԱՆ 25 Ր.
Կարելի է և ճաշով միասին՝ 40 ր.։
Հարցնել բնակարան № 19, Լեոնեաններին մօտ։ (Կ.) 1106. 2—2

ԳՐԱՍԵՆԵԱԿ ԵՒ ՊԱՀԵՍՏ
ԷԼԵՔՏՐՕ-ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ
„ԳԱՐԱՆՏԻԱ"
Կ. Ի. ՐԻՄԿԷՎԻՉԻ
Միխայլովսկի պր. և Կուկիևսկի փող. անկիւն, № 100—1. Տէլէֆօն 83.
ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ՆՈՐ ԱՐՄԱՏՈՒՐՆԵՐ, նոյնպէս և կան մեծ քանակութեամբ էլեկտր. լուսաւոր., զանգակների և ազդանշանի վերաբերեալ նիւթեղէններ։
ԳՐԱՍԵՆԵԱԿԸ իր վրա է վերցնում էլեկտրական լուսաւոր. և զանգակներ անցկացնելու, նաև բժշկական ապարատներ նորոգելու աշխատանք, նոյնպէս և ընդունում է պատուէրներ չոր և թաց էլեմենտներ պատրաստելու՝ ամեն տեսակ չափերի։
Գները մրցութիւնից դուրս։
1116. 1—1

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՆՕՆԻՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Աւտոմօբիլային հաղորդակցութեան Կովկասում
ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ՁՄԵՐԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ
Նոյեմբերի 2/15-ից 1911 թ.
ԲՈՐԺՈՄԻ, ԱԽԱԼՑԽԱՅԻ և ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻ միջև։
Բորժոմից Ախալցխա մեկնումը ամեն օր, երեկ. ժամը 4-ին։
Ախալցխայից Բորժոմ մեկնումը առաւօտեան ժամը 9-ին։
Շաբաթական մէկ անգամ, ուրբաթ օրերը, աւտոմօբիլը կը գնայ մինչև Աբասթուման և կը վերադառնայ հետևեալ օրը՝ շաբաթ, առ. ժամը 8-ին, մնալով նաև Ախալցխա առ. մօտ ժամը 9-ին։
ԳՆԵՐԸ { Բորժոմ—Աբասթուման՝ 5 րուբլի։
Բորժոմ—Ախալցխա՝ 3 րուբլի։
Ախալցխա—Աբասթուման՝ 2 րուբլի։
Բագաժի համար՝ առանց արտօնեալ 1 պուդի՝ իւրաքանչիւր պուդին 50 կ.։
(Ե. Հ. Չ. Կ.) 1066. 4—4

Бухгалтерскіе курсы
Н. В. АБРААМЯНА.
(Тифлисъ, Николаевская, 22)
Рекомендуютъ торговымъ фирмамъ, заводамъ и разнымъ промышленнымъ предпріятіямъ теоретически и практически вполнѣ подготовленныхъ БУХГАЛТЕРОВЪ, КОНТОРЩИКОВЪ, КАССИРОВЪ, КОРРЕСПОНДЕНТОВЪ. Желающихъ просятъ обращаться учредителю курсовъ лично, письменно или по телефону 744.
(Կ. Հ. Ու.) 1079. 10—7

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.